И ему, и председателю национально-культурной автономии «АПАГА», кандидату психологических наук, преподавателю факультета психологии Южного федерального университета Кристине Казарян, которая уже неоднократно совершала паломничество на Святую Землю, было чем поделиться с ребятами. В частности, был отмечен тот факт, что армяне, которые были и остаются единственным национальным меньшинством Иерусалима и которые с IV века непрерывно ведут там активную деятельность, свои прочные позиции не сдают до сих пор, но при этом очень нуждаются в поддержке соотечественников, в какой бы стране они не проживали.

Не исключено, что многие из участников состоявшегося разговора со временем смогут убедиться в этом сами. Ведь в октябре «АПАГА» организовывает паломничество на Святую Землю, знакомство с духовным, культурным достоянием нации на территории Иерусалима, посещение Иерусалимского армянского патриархата. Просмотр киноленты «От Арарата до Сиона», в том числе и сакраментальное утверждение «Каждое начало – путь, и каждый путь – начало…», которое доминантой проходит через весь фильм, стали для многих важным стимулом в реализации этой задумки.

Лариса КОВАЛЬЧУК.
Miasin.Ru

Արդի բանաստեղծության ուղղությունները եւ հոսանքները

Արդի հայ բանաստեղծության ուղղությունները երկուսն են` դասական և մոդեռն: Այս հոդվածում մենք կանդրադառնանք հայ մոդեռն բանաստեղծության ձևավորմանը և նրա հոսանքներին: Մոդեռնի սկիզբը մեզանում դրվում է 20-րդ դարի 60-ական թվականներին: Դարասկզբին ձևավորված մոդեռնը` նատուրալիզմ, ֆուտուրիզմ, սիմվոլիզմ և այլն, խորհրդային իշխանության պայմաններում ընդհատվում է 20-ական թվականների ավարտին: Այսօր մոդեռն անվանված բանաստեղծությունը, հետմոդեռնիզմի հետ խառն, գերակշռող դիրքում է: Եվրոպական գրականության մեջ հետմոդեռնիզմը սկզբնավորվել է 80-ականներին, չնայած նրա մասին խոսվում է 60-ական թվականներից:

Մոդեռն-հետմոդեռն ուղղությունների տարբերությունը տեսության մեջ կապվում է հետկառուցվածքաբանության իրողության հետ:

Ասենք, որ մոդեռնիզմն այսօր ներկայացվում է «ստեղծարար», իսկ հետմոդեռնիզմը` «ապակառուցողական» հատկանիշներով, բնութագրություններ, որոնք համապատասխանաբար տրվում էին դասական և մոդեռն ուղղություններին: Մեր շատ բանաստեղծներ սկսել են մոդեռնով և անցում կատարել հետմոդեռնիզմի: Մեր խնդիրը հայ բանաստեղծության մեջ մոդեռնի պատմությունն ու տեսությունն է: Մոդեռնիզմը ձևավորվել է որպես դասական ավանդների հակառակորդ: Դ. Զատոնսկին գրում է մոդեռնիստական նիհիլիզմի մասին. /Մոդեռնիզմը ամբողջությամբ հենվում է ժխտողականության վրա, տառացիորեն շնչում է նրանով…/: Սակայն դեռևս խորհրդային տարիներին գրականության փոփոխության անհրաժեշտությունը գիտակցվում էր: « - Կյանքը փոխվում է, - 60-ական թվականներին գրում է Մ. Գուսը, - հետևապես փոխվում է նրա կողմից գրականությանը առաջադրվող «ինֆորմացիան», կնշանակի, որ գրականությունը ևս չի կարող չփոխվել»: Բայց սա չի նշանակում, թե մոդեռնիզմի ճանապարհը հարթ էր: Իշխող գաղափարախոսությունը պայքարում էր «ռեալիզմին» հակադրվող ամեն մի փորձի դեմ:

Ռեալիզմ-հակառեալիզմ հակադրությունը արդեն խոսում էր մոդեռնի հանդեպ ժխտողականություն հանդես բերելու մասին: Նման վերաբերմունքը շարունակվում է նաև այսօր: Մոդեռնը դիտվել է և դիտվում է պարականոն, այնինչ այն ծնվեց որպես իշխող գաղափարախոսությունից հրաժարումի գեղարվեստական փորձ: Մոդեռնիզմը հետևանք էր նաև պատմական հեռանկարի կորստի, արժեքային համակարգերի վերարժեքավորման, մաքուր արվեստի պահանջի: Էլիտարիզմ, հերմետիկ կառուցվածքներ, «լաբորատոր» ձևաստեղծագործություններ. սրանք մոդեռնի բնութագրական հատկանիշներից են:

Մոդեռնը սկզբնավորել են Ջոյսը, Կաֆկան, Վուլֆը, Ստայնը, Էլիոթը, Պրուստը, Փաունդը, Սարտրը, Քամյուն, Իոնեսկոն, Բեկետը և ուրիշներ: Մոդեռնի ակունքները փիլիսոփայական նոր տեսություններ էին և Ֆրոյդի հոգեվերլուծական տեսությունը: Մոդեռն արվեստի և գրականության հերոսը օտարացել է աշխարհին, որն այլևս ամբողջական չէ, կյանքին ուղղված հայացքը հոռետեսական է և ողբերգական: Կյանքն ընկալվում է որպես քաոս և փշրում է դասական ռացիոնալիզմը, աշխարհի և մարդու կապի համընդգրկունությունը, ինքնավարացնում է արվեստը: Չնայած այս ամենին, մոդեռնիզմին բնորոշ չեն հակամշակույթի տրամադրությունները, հավատի ամբողջական կորուստը, որոնցով բնորոշվում է հետմոդեռնիզմը: Վերջինս բացառում է մշակույթի միասնությունը, այն «մակերեսների», հարթությունների ուղղություն է: Մոդեռնիզմը համարել են ձևապաշտություն: Սակայն Վ. Ժիրմունսկին նկատել է, որ «Ամեն նոր բովանդակություն անխուսափելի կերպով արվեստում հանդես է գալիս որպես ձև»: Նա ավելացնում է, որ «... արվեստում բովանդակային բոլոր փաստերը նույնպես դառնում են ձևի դրսևորումներ»: Արդի հայ պոեզիայում ձևի ասպարեզում ամենախոշոր նորարարներ են Հենրիկ Էդոյանը և Հովհաննես Գրիգորյանը: Հ. Գրիգորյանն ամբողջությամբ, Հ. Էդոյանը մասամբ, օգտվում են պատումային բանաստեղծության խոսքարվեստից, որն ունի իր օրենքները: Պատումային բանաստեղծություններն ունեն առօրյա, կենցաղային տեսարաններ /դա Հ. Էդոյանի պոեզիային բնորոշ չէ, որովհետև նա գրում է փիլիսոփայական և կրոնական թեմաներով/: Հովհաննես Գրիգորյանի բանաստեղծությունը զննական է, խորհրդածությունը արտածվում է «դեպքերից» ու «փաստերից»: Հենրիկ Էդոյանը պատումայինին համադրում է քնարականը, կերտելով երկիմաստ բանաստեղծություն /«Ամռան երազներ», «Ջութակների արվարձանի համար», «Հետզրություն» ժողովածու/:

Արդի հայ բանաստեղծությունը քաղաքերգական է` սրանից բխող պատկերային համակարգով /Արևշատ Ավագյան, Հենրիկ Էդոյան, Հրաչյա Թամրազյան, Արտեմ Հարությունյան, Դավիթ Հովհաննես, Սամվել Կոսյան, Ղուկաս Սիրունյան, Արմեն Շեկոյան, Հուսիկ Արա և ուրիշներ/:

Մոդեռն պոեզիայում գլխավորը ձևերի մշակումն է, կոմպոզիցիոն և կառուցվածքային «հանգույցների» համակարգումը, ասելիքի նորովի մատուցումը: Յուրաքանչյուր բանաստեղծ փորձում է մատուցել աշխարհի իր ընկալումը: Բարդ է մարդու կոնցեպցիան Հենրիկ Էդոյանի պոեզիայում, քանզի նա դիմում է տարբեր մշակույթների համադրման: Մոդեռն պոեզիայում աշխարհատեսությունը փոխաբերական է: Հ. Էդոյանի պոեզիայում աշխարհատեսությունը փիլիսոփայական է, գոյաբանական:

Մոդեռն պոեզիայի պոետիկան ամբողջությամբ նոր է, թարմ են բառապաշարը, կառուցվածքը, տաղաչափությունը, ռիթմը:

Արդի հայ պոեզիան բավականաչափ ուսումնասիրվել է /Ս. Սարինյան, Ժ. Քալանթարյան, Ս. Մուրադյան, Ա. Թոփչյան, Դ. Գասպարյան, Ս. Գրիգորյան, Ս. Աբրահամյան և ուրիշներ/: Սակայն մենք ըստ գրական ուղղությունների և հոսանքների ներկայացման առաջին փորձն ենք անում: Կարելի է ասել, որ ներկայումս բանաստեղծական հոսանքների բաժանման հիմքեր կան, որոնք մենք համարում ենք պատկերավորման տարբեր համակարգերը: Մեկ հոսանքին պատկանելը չի նշանակում սահմանափակություն: Բանաստեղծությունը մնում է լիարժեք, համընդգրկուն, ինչպես, ասենք, Հովհաննես Գրիգորյանինն է, սակայն պատկերահամակարգի առանձնահատկությունը մնում է գլխավորը: Մեր կողմից մոդեռն բանաստեղծական հոսանքների բաժանումն այսպիսին է. 1. Գեղագիտական, 2. Փիլիսոփայական, 3. Հոգևոր, 4. Հարասական, 5. Հումորի և պարոդիայի, 6. Քաղաքացիական, 7. Միֆի:

Այժմ տանք նշված հոսանքների համառոտ բնութագիրը: Գեղագիտական հոսանքը զուտ բովանդակությամբ դասական բանաստեղծություններից չէր առանձնանա, եթե չլիներ մոդեռնին բնորոշ պոետիկական համակարգի տեղաշարժը: Բանաստեղծությունը «կուտակում է» մաքուր պատկերներ: Պատկերն անցնում է պատկերի մեջ /նոր իմաժիզմ/: Հ. Էդոյանը «Լեթարգիական քուն» բանաստեղծության մեջ /«Հետզրություն» ժողովածու/ «պատկերը` պատկերի մեջ»-ը ձևակերպում է այսպես` «խոսքի մեջ` խոսք»: Պատկերային կուտակումները բնորոշ են բոլոր հոսանքներին: Գեղագիտական հոսանքի միակ առանձնահատկությունը սևեռումն է դեպի գեղեցիկը, որի ընկալումը սուբյեկտիվ է, իշխում է տպավորապաշտական կապը, փոխաբերությունը համատարած է, մեկ իրը անվանվում է մյուսի անունով: Պատկերները երևակայական են, այլև իրարից խզված են, առարկաներին փոխարինում են նրանց միջև եղած կապերը, գեղարվեստական տեղն ու ժամանակը պայմանական են, ինչպես ընդհանուր մոդեռնում: Գեղագիտական հոսանքի լավագույն ներկայացուցիչներից է Արևշատ Ավագյանը: Մյուս հոսանքների ներկայացուցիչները սկզբում հարել են այս հոսանքին /Հենրիկ Էդոյան, Աշոտ Ավդալյան, Հակոբ Մովսես, Էդվարդ Միլիտոնյան, Ղուկաս Սիրունյան և ուրիշներ/:

Փիլիսոփայական հոսանքի բանաստեղծության պատկերը գոյի նշանակիր է: Բոլոր բառերը միավորվում են նշանների և սիմվոլների հետ, ձուլվում իմաստային դաշտին: Բանաստեղծությունն ունենում է նախադիր փիլիսոփայական ուղղորդում, որը զարգանում է տեքստում և մղում առանձնահատուկ կառուցվածքի: Փիլիսոփայական հոսանքում առանձնանում է Հ. Էդոյանի պոեզիան: Նկատի ունենք տարբեր մշակույթների լեզվասիմվոլիկ համադրությունները: Նույն այդ բանաս-

⊃17

16⊃

տեղծությունը բազմակենտրոն է /տարբեր փիլիսոփայությունների բառ-բանալիների խմբերով/:

Գոյաբանական բանաստեղծության յուրաքանչյուր պատկեր աշխարհի մոդելավորման մեկ առանձին միավոր է: Պատկերը հավակնում է իրենով ամբողջը ներկայացնել /մասնիկի և միավորի կապ/: Պատկերաշարքը տարածության ու ժամանակի մոդելավորման գեղարվեստական համակարգն է: Մոդեռնիզմը հավակնում է մշակույթի «համապարփակության», «իրականության տիրապետմանը»: Արդի արձակում և պոեզիայում տարածում է ստացել էկզիստենցիալ գոյաբանությունը:

Պոեզիայի վրա, զանազան միջնորդավորումներով, ազդեցություն ունեն գրական տարբեր փիլիսոփայական բնույթի դպրոցներ, ասենք, «նոր վեպ», «աբսուրդի թատրոն», «աբսուրդի դրամա»: «Աբսուրդի դրաման» առնչություն ունի Հենրիկ Էդոյանի վերջին տարիների բանաստեղծական ժողովածուների հետ: «Հետգրություն» ժողովածուի «Տաճարի կառուցումը» բանաստեղծությունը քրիստոնեական միֆի փիլիսոփայական բանաստեղծացումն է: Էդոյանը խորն է տիրապետում քրիստոնեական սիմվոլիկային: Դիոնիսիոս Արեոպագացու միստիկ տեսության հիմնական հանգույցներից մեկը Տան /տնտեսության/ կառուցումն է: Թեման օգտագործել է Գրիգոր Նարեկացին: Էդոյանը տաճարի կառուցումը հագեցնում է մարդու գոյաբանական հարցադրումներով ու լուծումներով:

-Կառուցել տաճարը, քարը դնել քարին,
Բառը ձուլել բառին,
լուսավորել ամենամութ խորշերը գոյության,
մաքրել ճանապարհը միակ ճշգրիտ ճարտարապետի,
որի կարկինը իր կյանքն ու մահն է,
և իր ձեռքով գծված հատակագիծը
իր հարությունն է…
/«Տաճարի կառուցումը»/

Հ. Էդոյանը ընտրում է քրիստոնեական փիլիսոփայության բանաձևերը, դրանք համադրում էկզիստենցիալ գոյաբանությանը: Սակայն, ի տարբերություն էկզիստենցիալիզմի, նա փիլիսոփայական պեսիմիզմից, վախճանաբանական բանաձևերից հետո դարձ է կատարում «սրբազան» պատմությանը, ցանկանում է «հոր պես» իրեն պահել ուղիղ և կրել իր մեջ խոսքը, «որ սկիզբն է» /«Հինգ խոսք»/:

Հոգևոր բանաստեղծական հոսանքը շարունակում է քրիստոնեական գրականության, միջնադարյան հոգևոր բանաստեղծության ավանդները՝ մեր ժամանակյա գեղագիտական ու պոետիկական զարգացումների հետ զիրկընդխառն: Թ. Էլիոթը Է. Փաունդի մասին ասում է, որ նա լիովին ժամանակակից բանաստեղծ է, երբ գրում է միջնադարի մասին: Հոսանքը հետևում է ոչ միայն հայկական, այլև եվրոպական միջնադարի գրական ավանդներին, ստեղծում է արդիական պատկերահամակարգ՝ հոգևորի աղերսներով:

Հակոբ Մովսեսի պոեզիայում «բանաստեղծության ժամանակը դառնալով միակը՝ հնարավոր է դարձնում ծիսականի «հավաքչությունը», վերականգնվում են քրիստոնեական նախնական համայնքի հարաբերությունները…»: Աստվածաշնչական և նարեկացիական բառախմբերը բանաստեղծի համար «էներգետիկ կենտրոններ» են: …Հնագույն սակրալ իմաստի բառերն իրենց երբեմնի ամբողջական շղթայի մեջ են ներքաշում արդիական կառուցվածքի ռեալությունը: Ընդհանրապես ողջ ժամանակը իր արդիականով և արդիականությամբ դառնում է ծիսական:

Հ. Էդոյանի պոեզիայում համադրված են փիլիսոփայականն ու հոգևորը՝ մոդեռնիստական համակարգումով: Բանաստեղծը հաճախ գոյաբանական խնդիրները փոխադրում է քրիստոնեական փիլիսոփայության դաշտ: Իրար են առնչակցվում «այս աշխարհին ու գաղափարների երկինքը» /ս. Ավգուստինոս/: Պատկերը, խոսքը, ճշմարտությունը Էդոյանի պոեզիայում երևակվում են կրոնական չափումներով: Բանաստեղծը միստիկ դիրքում է. խոսում է Աստծո նշաններից, կարգը սպասում է աստվածային հավերժությունից: Նա Աստծո թեմային անդրադառնում է Երրորդության երեք դրսևորումներով:

Հակոբ Մովսեսը դիմում է Հյոլդեռլինի և Թրակլի ավանդներին:

Հրաչյա Թամրազյանի պոեզիան մոտ է միստերիայի ժանրին, որի կենտրոնում մարդու միստերիան է, նրա կյանքի գոյաբանական դրաման՝ Աստծո դրամայի սիմետրիայով: Գրականության և հոգևոր փիլիսոփայության կապը գնալով սերտանում է:

Հարասական բանաստեղծական հոսանքի լավագույն դրսևորումը Հրաչյա Թամրազյանի պոեզիան է: Այն նեոսիմվոլիզմի և սյուրռեալիզմի պոետիկական հատկանիշների համադրություն է, որը, ի վերջո, անվանվում է հարասություն: «Գիտակցության հոսքը» «Литературный энциклопедический словарь»-ում անվանված է ուղղություն: Հարասությունը «գիտակցության հոսքի» խոսքային դրսևորումն է: Գիտակցությունը հարընթացումի մեջ է, ինչը հատուկ է հետմոդեռնիզմին, երբ խոսքի արժեքը դիտվում է խոսքը: Բանաստեղծը տրված է խոսքի ընթացքին և ստեղծում է տարբերակներ: Հրաչյա Թամրազյանի խոսքը հանգում է սիմվոլների հարասությանը: Նրա բանաստեղծությունը, միֆական շերտին զուգահեռ, սեփական կյանքի հարասություն է: Եվ քանի որ հետկառուցվածքաբանության մեջ խոսքը և գիտակցությունը նույնական են, ապա մոդեռնիզմից հետմոդեռնիզմին անցնող հոսանքը ամենից զգայուն է արձագանքում կյանքին, որպես գիտակցությանը նույնարժեք պատկերավոր լեզվամտածողական համակարգ:

Հումորի և պարոդիայի հայ բանաստեղծության հոսանքը ձևավորվել է մոդեռնի հետ մեկտեղ: Ամերիկյան արձակում գործում է «սև հումորի» դպրոցը, որը հենվում է, ըստ տեսաբանների, գրոտեսկի ավանդույթների վրա: Ա. Զվերևը «սև հումորին» տալիս է թե ուղղություն և թե դպրոց անունը: «Սև հումորին» բնորոշ են համարում «միջանցիկ գրոտեսկը», պարոդիայի լայն օգտագործումը, հակումը պարադոքսալ իրադրության, «փրկչական կոմիզմը», հակաուտոպիան և այլն: Հովհաննես Գրիգորյանը վաղ է սկսել բանաստեղծության իր տեսակի ձևավորումը: «Սև հումորի» հետ նրա առնչությունները ընդամենը տիպաբանական են: Առավել ուղղակի են աղերսները եվրոպական ու ամերիկյան երգիծանքի և պարոդիայի բանաստեղծության հետ: Սակայն Գրիգորյանի պոեզիան բազմաստիճան պարոդայնության և ազգային երգիծանքի խոսքարվեստի հաշվին ձեռք է բերվել բացառիկ ինքնատիպություն: Նրա պոեզիայում հումորը գեղագիտականացված է: Պատումին բնորոշ է հատվածայնությունը, կրկնվում են մոտիֆները: Գործողության ընդհանուր տեղը /топос/ պայմանական է, կամերային /փողոց, թաղ, տուն, սենյակ և այլն/:

Բանաստեղծությունը հագենում է փաստագրությամբ /«Գեղարվեստական միջոցառում կանանց զաղութում», «Դիանա արքայադստեր, թե՝ իշխանուհու թաղումը», «Հայ ժողովրդի պատմության համառոտ ձեռնարկ», «Այս գիշեր և վաղը ցերեկը» և այլն/: Պարոդիան մեկ ռեալությունը հանգեցնում է մեկ այլ ռեալության: Գրիգորյանի պոեզիան պարունակում է նաև այլ ժանրային հատկանիշներ: Միֆի բանաստեղծական հոսանքում առանձնանում է Էդուարդ Միլիտոնյանի ստեղծագործությունը, որտեղ առկա են ազգային միֆի փոխակերպումները: Քննադատությունն առանձնանում է «անտիպոեզիա», որը ճիշտ չէ, քանի որ նշված բոլոր հոսանքները «անտի» պոեզիա են:

Նորայր ԴԱՎԹՅԱՆ

ՎԵՐԱԾՆՎՈՂ ԳՅՈՒՄՐԻ

Հանրապետության երկրորդ քաղաք Գյումրիում երկրաշարժից 22 տարի անց դեռ շատ անելիք կա: Նախկին փլատակների փոխարեն հառնում են նորակառույց բազմահարկ շենքերը: Վերականգնվում է Անիի Մայր տաճարի նմանությամբ 1853 թվականին կառուցված և 88-ի երկրաշարժից տուժած Սբ. Ամենափրկիչ եկեղեցին: Բացվում են ճոխ ու հարուստ խանութներ, հարմարավետ ու հաճելի սրճարաններ, բարեկարգվում են զբոսայգիները, սակայն քաղաքը դեռ լիովին չի մաքրվել երկրաշարժի հետքերից: Ժողովուրդը ոգևորությամբ հիշում է Հայաստանի և Ռուսաստանի Դաշնության նախագահների վերջերս Գյումրի կատարած այցը, որը նկատելի աշխուժություն հաղորդեց քաղաքի կյանքին: Մեկ-երկու նման այցելություն, և աղետի գոտի ասվածը կվերանա՝ ասում են կեսկատակ-կեսլուրջ:

⊃19

Լույսի «զվարթ գիտությունը»

Նորպլատոնականներն ընդունում էին Խոսքի և Ոգու միասնությունը: Խոսքում արդեն շնորհված է արքայությունը: Հակոբ Մովսեսն իր ստեղծագործությամբ («Լույս զվարթ» ժողովածուն տպագրել է 2009 թ.) մեզ կողմնորոշում է դեպի մեզ տրված արքայությունը: Բանաստեղծը գրական պատկերը դիտում է որպես աստվածայինի, իդեալականի հիշեցման, վերարթնացման միջոց` հոգևոր մտածողությամբ կեցություն շնորհելով երկնքի ու երկրի համամբողջական տարածքում: Այդ հնարավորությունը տալիս է հոգևոր գրական պատկերի ունիվերսալությունը: Նա ձգտում է ի մի բերել հոգևոր խոսքի պրոեկցիաները` դրանք հատելով գեղագիտական ու փիլիսոփայական «ենթակառուցվածքներին»:

Հայտնի է, որ կրոնը իդեալը հեռացնում է երկրային առնչություններից: Է. Կանտը իդեալը տեսնում է անիրական ոլորտում: Հակոբ Մովսեսը, չհակադրվելով վերիրական իդեալ հասկացությանը, տեղի է տալիս իդեալի «գործողության» առջև` կյանքը երևակայությամբ փոխադրելով սուրբգրային համակարգ: Բանաստեղծական խորհրդանիշներով նա մեզ տանում է դեպի «աննյութ սկզբնատիպերը» (Դիոնիսոս Արեոպագացու տեսական դրույթներից է): Գեղարվեստական խոսքի մեծ պայմանականությունը հնարավորություն է տալիս տեսանելիորեն մոտենալու մաքուր կեցությանը (կեցություն` խոսքի մեջ): Խոսքը (Լոգոս) և նրա ստվերը (կեցություն) միաձուլվում են իրար: Հ. Մովսեսի պոեզիան նման միջնորդիչ դեր ունի: Երկբևեռ միաձեցումը, ըստ էության, դրամատիզմի հիմքն է, քանզի փորձ է արվում հաղթահարելու երկիր-երկինք հակադրությունը: Բանաստեղծը Լոգոսի կառուցվածքում է տեսնում գոյն ու կեցությունը: Հ. Մովսեսը բանաստեղծությունը ներքաշում է բացարձակ Խոսքի հիշողության խորքը: Կեցությունը վերհիշվում է որպես Սկզբնապատճառի հաղորդած փորձ: Բանաստեղծի խոսքը երկրորդում է հոգևոր տեքստերին: Հ. Մովսեսը «Լույս զվարթ»-ի արձակ տեքստերով դուրս է գալիս խոսքի ընդունված մշակութային դաշտից` մոտենալով նրա զուտ հոգևոր կերտվածքին: Նման պարագայում լեզուն դժվարին ինքնաստուգման մեջ է, երբ նորից նոր պետք է սահմանել նրա պայմանականության կարգը: Այս կարգում իշխողը, լեզվի առաջ տանող ուժը մեղքից ու մահից ազատ հայեցողությունն է: Հ. Մովսեսը առաջնորդվում է մետաֆիզիկական ճանաչողությամբ, որը հակասություններից դուրս ճանաչողությունն է:

Հայդեգերը «Ինչ է մետաֆիզիկան» աշխատության մեջ լույսին վերագրում է աշխարհի ու մարդկության իմաստ: Ըստ նրա` իսկական պոեզիան աղքատացող աշխարհում օգնության է կանչում Փրկչականը: Բանաստեղծը Աստծո ճանաչման ապոֆատիկ եղանակն է ընտրել, որը լիակատար անճանաչությունն է: Նա առաջնորդվում է գաղտնի խորհրդով ու հոգևոր պայծառացումով: Մարդը որքան պարզ է իր էությամբ, այնքան դյուրին է տրվում հոգևոր լույսին: Ահա թե ինչու բանաստեղծը հոլովում է կտակարանային արհեստավորների անունները` հովիվ, որսորդ, ձկնորս և այլն: Նրանք ասես ուղիղ կապ ունեն կեցության Սկզբնավորողի հետ: Բանաստեղծը իր խոսքում վերստեղծում է հոգևոր հիմնարկեքի պահը: Հենց այս պահին կեցությունը դրամատիկական է, որովհետև գոյն ու կեցությունը այս պահից գնահատական են ստանում, լրանում են աստվածայինի իմաստով:

- Եվ ես զմայլված էի, և ես նույնպես, մահվան խայթը հեռացնելով մահկանացուի իմ գարշապարից, լույսի ոտքը համբուրեցի («Բանաստեղծի ճառը լույսի մասին»):

- Եվ մեռելները` մազերն սպիտակ, բրիչներն իրենց հողը խրելով` //Հեռու դաշտերում տորոն են հանում («Ուրեմն` ես էլ` երկրի երեսին»):

Մետաֆիզիկական հայեցողությունը, որը հենց աստվածաբանությունն է, աշխարհը դիտում է խաղաղ հայեցողություն: «Լույս զվարթ»-ը տարփողում է, դրամատիզմը (այս անգամ որպես հոգու թատերայնություն) պահպանած, լիակատար խաղաղությունը, հանգիստը, ներկլանվածությունը (իմա` իսիխազմ): Սա միայն Աստծո և մարդու միասնական աշխարհում տեղ գտած ապրումն է:

- Իսկ ինձ անցած կիրակի դուք տեսնեիք, -
Ինչ զվարթ էի, քանի որ իմ սուրհանդակը
ինձ մի թուղթ էր բերել, որ Աստծո
շինարարները գոյության նախամուտքն
ավարտեցին:
(«Բանաստեղծի ճառը լույսի մասին»):

Աստծո և մարդու միասնական աշխարհում գոյավորները տեղի կարգ ունեն` Սկզբնագոյավորներ և հետնագոյավորներ: Նրանք ապրում են հոգևոր արժեքների աստիճանակարգության պայմաններում, դուրս ժամանակագրությունից կամ որ է` պատմականությունից: Հիշենք մի լավ արտահայտություն` Աշխարհի կառուցման յոթ օրերը ոչ թե ժամանակագրական են, այլ հիերարխիկ:

Հ. Մովսեսը կեցությունը դիտարկում է նրան հարադրվող ինֆորմացիոն բազմիմաստությամբ, որը հենված է նշանների ու սիմվոլների, լեզվի այլագոյ «պատումի վրա»: Այլագոյ ասելով` նկատի ունենք այնկողմնայինը (տրանսցենդենտալ):

Մենք Հ. Մովսեսի հոգևոր-գեղագիտական հոսանքի բանաստեղծության մեջ տեսնում ենք հավաքական սուբյեկտիվություն, որը դրսևորվում է «սրբության հետ» խումբ ներկայացնող մարդկանց կապով: «Ես»-ը մշտապես ներկայանում է խմբի մեջ:

Հոգևորին միտող տեքստում բացվում է մի նոր իրականություն, որը ներքուստ երկիրական համաչափություն (սիմետրիա) է ստեղծում: Երկնայինի և երկրայինի համաչափությունը անխախտ է:

Նշանային և խորհրդանշանային «հայեցակարգերը» կոչված են արտահայտելու աշխարհի և նրա հոգևոր ընկալման ինքնատիպ դրաման: Բանաստեղծը միտում է թատերականացնել դրամատիզմը (դոստոևսկիական բարդույթ): Միաժամանակ հիշենք, որ կտակարաններում դրամատիզմով է պայմանավորված կեցության խորհուրդը: Հեգելը առանձնացնում է «սրբապատկերային նշանները` որպես «անմիջական դող» արթնացնող նշաններ:

Ընդհանրապես, հանձին գեղեցիկի, մենք այն անանջատ պետք է դիտենք հոգևոր լարումից, ինչը բացարձակ ու մաքուր դրամատիզմի ելակետն է: Գեղեցիկը, որպես ինքնակեցություն, առավել տագնապալի է: Ուրեմն միայն հակադրությունը չէ, որ դրամատիզմ է ծնում: Նշանը, բացարձակ իդեան դրամատիզմի կենտրոն են` հենց որպես այլագոյության մարտահրավերի, ինքնապահպանության տագնապալի օբյեկտ:

Մետաֆիզիկական վարդապետությամբ Հ. Մովսեսը շրջանցում է բինար հակադրությունները` պատկերակարգի առանցք ընտրելով թեզի և անտիթեզի միասնականությունը: Հայեցողության մեջ հակադիր իմաստները ներթափանցում են, ապահովվում է մետաֆիզիկական անցում, մետաֆիզիկական փոխակերպություն: Հակադրության հիմքը չեզոքանում է` մենիմաստությանը հաղորդելով բազմաստիճան ինֆորմացիա` որպես Իմաստի հարստացում (կեցության իմաստի հարստացում):

Հ. Մովսեսի պոեզիայում, ինչպես հոգևոր գրականության մեջ, հաշվի չեն առնվում տեղը, ժամանակը, գործողությունը` դառնալով պայմանական, ինչը հանգեցնում է դրանց բացարձակի գիտակցմանը: Եվ այսպես «բինարիզմը» իր տեղը զիջում է իռացիոնալիզմի բերած այլ տրամաբանության կեցությանը: Սակայն Հ. Մովսեսի պոեզիայի հետ կապ չունեն իռացիոնալիզմի բուն հատկանիշները` աբսուրդայնություն, կեցության անիմաստություն և այլն: Նրան հարազատ է անճանաչությունը որպես ճանաչություն սկզբունք: Բանաստեղծը ապավինում է հայեցողությանը, որը նրա խոսքի հենարանն է: Համաձայն Հեգելի` պատկերն ընդհանրացված հայեցողություն է: Հայեցողության պարագայում պատմությունը հանգում է ոչ պատմությանը. իշխում են ժամանակից դուրս գտնվող արժեքները:

Բանաստեղծը Լոգոսի դիրքերից հակադրված է էրոսին:

Մենք գործ ունենք մի շատ հետաքրքրական երևույթի հետ: Հետևելով հոգևոր գրականության մոդելին` Հ. Մովսեսը, Սուրբ գրքի կանոնների օգտագործմամբ, շարունակում է նրա մեկնողական ավանդույթը (էկզեգեզա):

Գրիգոր Նարեկացին «Մատեան ողբերգության» պոեմում Սուրբ գրքի մեկնության ծավալուն խնդիր է լուծել, ինչը հետազոտողների ուշադրությունից դուրս է մնացել:

Մենք արդեն նշել ենք, որ Հ. Մովսեսը լայնորեն օգտագործում է նշաններ ու խորհրդանշաններ, ինչը պայմանականությունը հասցնում է նոր աստիճանի (ասենք` թագավոր, կնիք, ցուլ, առյուծ, ձուկ, ճրագ, հայելի, մսուրք, ջուր, սքեմ և այլն): Թող որ ջուրը իմացություն նշանակի, ճրագը` հոգևորը, սքեմը` հավատը, ձուկը` հավատացյալ ու նաև ցանկություններից ազատ լինելը և այլն: Արդի պոեզիան, սակայն, քննադատվում է նշանային և խորհրդանշանային հագեցումի պատճառով: Մոռացվում է, որ երևույթը նոր չէ. «Հին Արևելքի արվեստում իշխում են ծայրահեղ պայմանական, այլաբանական կամ խորհրդանշանային պատկերներ…» :

Արդի պոեզիան դարձ է կատարել Հին Արևելքի «ծայրահեղ պայմանական» պատկերակարգին, որը թելադրված է նույնպես այնկողմնային իմաստային ներթափանցումներով: Գալով դասական պոեզիայի պատկերամտածողությանը` հարկ է նշել, որ նրա հիմքում անտիկ ավանդույթն է` իմաստի լիարժեք դրսևորում, պարզ, պլաստիկ պատկերներ: Հակոբ Մովսեսը համադրում է երկու ավանդույթները (Հին արևելյան և հունական), ինչպես հոգևոր տեքստերում է: Հ. Մովսեսը, որքան էլ օգտագործի Հին արևելյան արվեստի ավանդույթը, ձգտում է ներդաշնակ համամասնության և ավարտունության: Նա տեքստային ամբողջականության մեջ պահպանում է պատկերմիավորների առանձին արժեքները,

➲19

18⊃

հոգևոր-գեղագիտական շարժման ուղղությունը. զգացական արտացոլում-մտային ամբողջացում - երևակայական իրականություն և սրա զգայական մարմնավորում: Հոգևոր պատկերային շարժման այս ուղղությունը, որ տրված է գրականագիտական հանրագիտարանային բառարանում, հիմքում ունի հեգելյան ձևակերպումը՝ «պատկերը անմիջական զգացողության և իդեալական մտածողության մեջտեղում է գտնվում և ներկայացնում է առարկայի հասկացության և նրա արտաքին կեցության ամբողջականությունը» :

Բանաստեղծը հոգևոր շարժման ասպարեզում հանդես է բերում նպատակադիր ակտիվություն: Նա երևակում է կեցության ներքին պոտենցիալը՝ նրան ձուլելով արտաքին կեցությանը:

Նորայր ՂԱԶԱՐՅԱՆ,
բանասիրական գիտությունների թեկնածու

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ

ԲԱՐԵՎ, ՄԱՅՐԻ՛Կ

Մանկության ժամանակ քեզ համար հայրենիքը քո ընտանիքն է, քո մանկապարտեզը, քո պահմտոցին ու զուլալ ընկերները, քո փողոցն ու տատիդ գրպանից դուրս եկող կոնֆետը: Բայց հայրենիքն ավելի մեծ՝ գլոբալ հասկացությունն է, որը սպունգի նման կլանում է քո ապրած տարիների փորձառությունը, և զգում ես, որ հայրենիքը քո կյանքի մի մասն է, Պանթեոնի սրբացած շիրիմները, տաճարներիդ կիրակնօրյա պատարագներն ու հնամենի գրաբարյան «Հայր մերը», մանկապարտեզներում հնչող թոթովախոս սևաչյաների վարդաբույր հայոց լեզուն, զինվորների խրոխտ քայլերն ու սահմանային տագնապը, հեռուստատեսային «Երգ երգոցն» ու թեթևաժանր սերիալները, որդեկորույս մայրերի թաց աչքերն ու աղքամաններից հաց հավաքող սոված մարդիկ:

Հայրենիքն այն տարածքն է, որի հողին դու կապված ես հազար ու մի թելերով և այդ հազարից մեկ թելն էլ քո սրտից է ձգվում և հեքիաթի կծիկի նման գլորվում է պատմական Հայաստան, ու այդ թելի վրա շարվում են նախնիների գաղթն ու վերադարձի կարոտը, կարոտ, որը հետագա սերունդին մղեց գրելու այդ կարոտի ու գաղթի մասին, նվիրական սիրո և աշխարհի մաքրությունն իր մեջ կրող մոր մասին:

Հայերենը շատ հարուստ լեզու է, բայց այս պահին դժվարանում եմ նկարագրել այդ զգացմունքները, որ ունեցա Անրի Վեռնոյի «Մայրիկ» ֆիլմը դիտելիս: Դա զգացմունքների անթարգման ֆիլմ է, որն ինձ համար դարձավ աշխարհի ամենագեղեցիկ ֆիլմը: Նույնիսկ եթե հայ էլ չլինեի, ֆիլմն իր համամարդկային խտացված կերպարներով դարձյալ մնում է համաշխարհային լավագույն ֆիլմերից մեկը: Մի հայ գաղթական ընտանիքի պատմությունը մի ողջ ազգի պատմություն է, որն օտար ափերում շարունակելով իր գոյության կռիվը՝ մնում է ավանդապաշտ ու արժանապատիվ: Հեղինակի կերպարը այն անկյունաքարն է, որի վրա բարձրանում է տաճարի նմանվող ֆիլմը, և ամեն սրբատաշ քար իր ամուր տեղն ունի տաճարում, որի գմբեթը զարդարում է սուրբ խաչն իր վրա կրող մայրիկի կերպարը՝ միշտ ազնվազարմ ու քնքուշ, համեստ ու խոնարհ, խաչի պես զորավոր ու պահապան, միացած իր երկու քույրերի հետ, որին հեղինակը միշտ անվանում է Սուրբ Երրորդություն:

Սա է հայ ընտանիքը՝ անբաժանելի, անմահանալի և միասնական Ս. Երրորդություն: Եվ զարմանալ կարելի է, որ հայ մոր դերը այդքան հայեցի կարող է խաղալ իտալուհին, որի չնչին շարժումներից անգամ հայություն էր կաթում: Եվ պատահական չէ, որ Անրի Վեռնոյը Կլաուդիա Կարդինալեին է ընտրել մոր կերպարում. պարկեշտ դերասանուհի, որի Մայրիկի կերպարը ավելի բարձրացրեց նրա արժեքը, և մի ամբողջ ժողովրդի համար նա մնաց ամենասիրված կերպարը կինոյում:

Նույնը կարելի է ասել Օմար Շարիֆի մասին, որը մտավ յուրաքանչյուր հայ ընտանիք և գրավեց բոլորի սրտերը՝ որպես ընտանիքի պատվախնդիր հայր, Վահանի պես ամուր հենարան, իր զավակի համար դժվարությունների առաջ ընկնող անձնավորություն: Շնորհակալություն Կլաուդիա Կարդինալեին, Օմար Շարիֆին, հայ չծնված, բայց կայացած հայի կերպար ստեղծելու համար:

«Մայրիկ» կինոնկարի համար վաղուց էի մտադրվել իմ շնորհակալությունը հայտնել նաև Անրի Վեռնոյին: Ափսո՜ս... ուշացա, ուշացա դա կատարել Ձեր երկրային կյանքում, բայց երբեք իմ աղոթքներն ու խնկարկումները չեն ուշանա Ձեր երկնային կյանքի համար, իմ փոքրիկ ազգի մե՛ծ զավակ, խոնարհ ու բարձր, որքան անհաս Ձեր մեծությամբ, այնքան հասանելի զգացմունքայնությամբ ու նվիրումով: Հայ ժողովուրդը սիրում է Ձեզ: Եվ ինչպես «Մայրիկ» կինոնկարում է ասվում, մի հեռախոսազանգ կազդարարի վատ լուրը, «և ես հաստատ կմրսեմ», այնպես էլ մենք մրսեցինք Ձեր բացակայությունից, բայց Ձեր անունը երբեք չի մրսի հայ ժողովրդի տաք շուրթերին:

Իմ ժողովրդի ջերմ խոնարհումները Ձե՛զ:

Սուսաննա ԳԱԼՍՏՅԱՆ,
Հայաստանի ազգային գրադարան

17⊃

ՎԵՐԱԾՆՎՈՂ ԳՅՈՒՄՐԻ

Այդ այցից օրեր են անցել, սրամիտ խոսքի, ճոխ ապրուստի սիրահար ու դժվարություններից չընկճվող գյումրեցիների կյանքը շարունակվում է իր հունով: Քաղաքի Յոթվերք եկեղեցում գրեթե ամեն օր կատարվում է պսակադրության արարողություն, որից հետո Վարդանանց հրապարակով մի քանի պտույտ կատարելուց հետո հարսանեկան շքեղ շարասյունն ուղղորդվում է դեպի հարսանյաց սրահ: Ստեղծվում են նոր ընտանիքներ, որոնցից շատերը բախվում են բնակարանային խնդրին: Այն Գյումրիում դեռ լիովին լուծված չէ: Նորակառույց թաղամասերում բացահայտված շինարարական որոշ թերացումներ բնակիչներին մտահոգվելու տեղիք են տալիս: Մասնավոր շատ տների սեփականատերեր էլ առայսօր չեն կարողանում ձերբազատվել երկրաշարժի հետևանքներից, վերացնել տանիքների ու պատերի ճաքերը:

Լուծված չէ նաև աշխատատեղերի խնդիրը (ի դեպ, ինչպես ամբողջ հանրապետությունում): Նորաբաց և 500 աշխատատեղ ապահովող շաքարի գործարանը երկու ամիս հետո փակվեց տեղի ունեցած պայթյունի պատճառով:

- Քաղաքի ջահելները զբաղվում են ով ինչով կարողանում է, ինչ գտնում է, - պատմում է Յոթվերք եկեղեցուց դեպի ձախ ձգվող Կիրովի փողոցում վիճակախաղության տոմսեր վաճառող երիտասարդը: - Ճիշտ է, խանութներ ու հանգստյան վայրեր շատ կան, սակայն շարքային գյումրեցին դրանցից օգտվելու հնարավորություն քիչ ունի: Շատերն իրենց համար գործ են գտել այստեղ, որը գյումրեցիների սիրած վայրն է: Մարդաշատ այս փողոցը երբեմն անվանում են «Արբատ», սա էլ մեր վերնիսաժն է, որտեղ վաճառվում են գրքեր, կտավներ ու զանազան զարդեր:

Գրավաճառ Վաղինակը սեփական բուկինիստական գրախանութի լուծարումից հետո այստեղ է գրքեր վաճառում: Չի դժգոհում օրվա առևտրից, բայց որ մեծ քաղաքի 5 (ընդամենը) գրախանութում գրենական պիտույքներից բացի ոչ մի գիրք չի վաճառվում, ցավալի է:

«Արբատով» անցուդարձ անողների համակրանքը երգիչ-ակորդեոնահար Միերի հանդեպ ակնհայտ է: Նրա կողքով անցնելիս ոտքերը կախ են գցում Միերի քաղցահունչ ձայնն ունկնդրելու համար: 32-ամյա Միերը օրվա հացը վաստակելու համար Վանաձորից եկել է Գյումրի: Սակավախոս երգչի երազանքը միակ դստերը ղեկավարի պաշտոնում տեսնելն է. «Ես բան չհասկացա, գոնե ինքը մարդավարի ապրի»: Միերը սիրային բազմաթիվ երգերի հեղինակ է, ունի ձայնասկավառակ, որը, սակայն, չի վաճառվում, քանի որ, ինչպես ինքն է ասում, անթիկունք մարդը միշտ էլ ստվերում է մնում: Մասնակցել է երաժշտական մի շարք մրցույթների: «Սպիտակ կարապ-2007» հանրապետական ամենամյա մրցույթ-փառատոնում «ժողովրդական երգ» ժանրում 18-ից բարձր տարիքային խմբում արժանացել է պատվավոր 2-րդ մրցանակային տեղին: Երևանի ՆՓԱԿ-ում կազմակերպված մրցույթում հաղթել է՝ առաջ անցնելով 32 երգիչ-երգչուհիներից:


- Շատ եմ սիրում երգ-երաժշտություն, փոքր հասակից նվագել եմ ակորդեոն: Մորաքույրս հիանալի ձայն ունի, ճանաչված երգչուհի է: Երևի ձայնային տվյալներս նրանից եմ ժառանգել:

Ահա այսպես, իր առօրյա հոգսերն ու դժվարությունները հաղթահարելով ապրում է Գյումրին՝ չկորցնելով հույսը, որ վաղ թե ուշ հրաժեշտ է տալու «աղետի գոտի» հասկացությանը:

Մանե ՆԵՐՍԵՍՅԱՆ

Մշակույթ

ՈՐ ՆՎԱԳԱՐԱՆԸ ՆԿԱՏԻ ՈՒՆԵԻՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԵՐԸ՝ ԳՐԵԼՈՎ «ԾԻՐԱՆԱՓՈՂ», «ԵՂԵԳԱՆ ՓՈՂ»



Մերօրյա իրականության մեջ «դուդուկ=նայ» նվագարանը ստացել է նոր անուններ՝ ծիրանի փող, եղեգան փող, սրինգ: Մինչդեռ, վաղնջական ժամանակներից ի վեր, հայոց մեծերը, նույն ինքը՝ մեծն Կոմիտասը, անգամ խորհրդային տարիների մտածողները, գրելով «եղեգան փող», «հովվական փող», «ծիրանի փող», «սրինգ»՝ պատկերացրել են կոմիտասյան՝ հովվական փողի=սրնգի տեսակը:

Մասնագիտական, հանրագիտարանային բնույթի աղբյուրից տեղեկանում ենք, որ ծիրանենուց հայը պատրաստել է հովվական փող=սրինգ, ուզբեկը՝ զուռնա, ադրբեջանցին՝ զուռնա, դուդուկ, դաղստանցին՝ զուռնա, դուդուկ, շվի և եռալար կսմիթային նվագարան՝ աչար-կումուզը՝ ծիրանենու մեկ ամբողջական կտորից: Ուզբեկներն, օրինակ, իրենց զուռնան կարող են կոչել՝ «ծիրանազուռնա»: Իսկ ո՞ր նվագարանը նկատի ունեին հայոց մեծերը հայոց պատմամշակութային անցյալի ողջ ընթացքում, գրելով «եղեգան փող», «հովվական փող», «ծիրանի փող», «սրինգ»:

Կոմիտասյան հովվական սրնգային փողի տեսակի մասին մեր ժողովրդի շատ երևելիներ են գրել, ինչպես օրինակ, 1915 թվականի զոհեր Ռուբեն Սևակը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, 1937 թվականի զոհեր Թոթովենցը, Չարենցը, աքսորի ճանապարհը բռնած Գուրգեն Մահարին, նաև՝ Նաիրի Զարյանը: Ի վերջո, «Ծիրանի փող» ստեղծագործության համար բանտարկվեց և սպանվեց Ակսել Բակունցը: Նա մանրամասնորեն նկարագրել է ծիրանի փողը, որը ճիշտ և ճիշտ կոմիտասյան հովվական փողի=սրնգի նկարագրությունն է:

Մուշեղ Գալշոյանի հերոսը (Մելոն) գաղթի ճանապարհին կորցնում է իր ծիրանափողը: Ապա նորն է պատրաստում՝ կոմիտասյան-բակունցյան հովվական սրնգային փողի տեսակը, սովորականից ավելի երկար, սակայն առանց նվագանցքերի: Նա այլևս երբեք չէր նվագելու, այլ փոխակերպելու էր իր հովվական փողը և օգտագործելու էր իբրև ծխամորճ: Իր «էրգրում» նա չէր ծխում: Եվ երբ ֆիդայիները՝ Աղբյուր Սերոբը, մյուսները, թաքնվելով սարերում, խնդրում էին բարձրանալ իրենց մոտ ու փող փչել, նրանք այդ նվագի տակ պարում էին հայոց հինավուրց ռազմական պարը՝ «Յար խուշտա»-ն (=ԾԱՓՊԱՐԸ=ԾԱՓԽԱՂԸ): Բակունցյան հովվական «ծիրանի փողը» «կարմրավուն սրինգն» էր: Այն հովիվների սովորական սրնգից քիչ ավելի երկար էր, որի նվագի տակ «Յար խուշտայից» երկիրն էր դղդում: Նրանք պարում էին «hսկաների հին պարը»: Մուշեղ Գալշոյանի հերոսներից Նինոն, որը մարմնավորում էր իր հորեղբորը, իր սրնգից չէր բաժանվում: «Փողփուչ Նինոն, ծիրանի փողը ծնկներին մեկնած, հակված ծխում է: Փողփուչ Նինոն զրուցատեղի էր գալիս սրինգը ձեռքին, ամեն անգամ սրինգը ձեռքին ... նստում էր ճրագի տակ, ամեն անգամ նույն տեղը, սրինգը մեկնում ծնկներին և լուռ ծխում»:

Սասնա ազգագրությանը նվիրված աշխատություններում (Պետոյան Վ. Ա., Կարապետյան Ե. Կ.) հովվական փողը՝ սրինգը, միակ նվագարանն էր, որով ժողովուրդը ուղեկցել է իր խմբապարը: Այնուհետև խորհրդային տարիներին այն փոխարինվում է զուռնայով, որի նվագն ու պարեղանակը հասնում են Կրեմլ:

***

Ավագ սերնդի ներկայացուցիչների վկայությամբ՝ լիներ կնունք, ծնունդ, թե հարսանիք. սրինգ էին հնչեցնում: Թաղման ժամանակ, երբ քահանան լռում էր, հնչում էր սրնգային փողը: Սասունից գաղթած կաքավաձորցի սրնգահարի որդի Վաղինակ Մուրադյանի (1929-2004) բանավոր վկայությամբ, 1947 թ. Առուճի (նախկինում՝ Թալիշի) եկեղեցին վերականգնելու նպատակով, շրջակա տարածքից գաղթականների աճյունները տեղափոխելիս, հանգուցյալի մարմնի հետ՝ որպես սրբազան մասունք, հայտնաբերվել է հովվական սրինգ=փող: Այն չէր քայքայվել, քանի որ պատրաստելիս կրով և ձեթով հատուկ մշակած է եղել: Իր նախնիներից ծերունի Վաղինակը լսել է, որ մշեցիների «ամենամեծ ուխտավայրը՝ Մարութա սարն էր: Էնտեղ նվագում էին մենակ սրինգ, ուրիշ գործիք չկար, և քրդերը մասնակից էին մեր ուրախությանը»: Սրնգային փողի ձայնին մարդիկ ենթարկվում էին, ինչպես Ավետարանին, իսկ քահանան ասում էր. «Փողփուչի թևը դալար միշտ կմնա»: Տղամարդկանց համար բաղձալի պահ էր «Յար խուշտան», «Վեր վերին», «Քոչարին»՝ սրնգի նվագի տակ, և սրինգը սրնգահարի ձեռքերում «հալչում էր»: Տղամարդիկ իրենց խրոխտ, բոցաշունչ պարն են պարել Էրզրումցի գաղթականի շառավիղ՝ սրնգահար Կարապետ Դավայանի (1910-1966) հովվական փողի=բլուլ=սրինգի նվագի տակ, սրնգի նվագով անցկացրել երեկոները օդայում: Իսկ սրնգահար մշեցի Մգրոն, Ավան գյուղի հարևանությամբ, բարձունքներում սփռված Խնուսիկ (նախկին՝ Ղոյթուռ) գյուղից իջնում էր Բյուրական՝ Կոմիտասի սրինգները պատրաստող վարպետ և սրնգահար բյուրականցի Չիլինգար-Գրիգորին էր հանձնում վերականգնելու իր hզոր շնչից ճաքած սրինգը, որի hնչյունը մեկ-մեկ, ինչպես hաղորդում են, «եկեղեցու զանգի էր նման»[-վում]: (Ո՞ւր են մեր սրնգահարները, ո՞ր հեռավոր երկրում ...)

Տարագիր (ծնունդով խարբերդցի) Համաստեղի «Հայաստանի լեռներու սրնգահարը» ստեղծագործության մեջ, հրաշքով Հայոց լեռները, «ոսկեսար Ալագյազը «հովվական փողի նվագի ազդմամբ տեղափոխում են հեռավոր Ամերիկա՝ երկրի ժողովրդի հետ տարագրված հոգիների հետ: «Վարպետ սրնգահարի»=«ղավալ բռնողի» հովվական նվագը կարող էր գետի հոսանքը կանգնեցնել, նրա նվագով ծառերը, թփերը լեզու էին առնում: «Սրնգի ձայնը գալիս է քարերից. ծառերից, նույնիսկ միջատներից, երգը գալիս է ամեն կողմից»: Նվագի hնչյունը մտնում է մարմնի մեջ, առավել ցանկալի դառնում, քան երկրի փառքը և բարիքները: Համաստեղի հերոսներից մեկը պիտի ասի. սա կամ երկնքից իջած երաժշտություն է, կամ՝ Հայաստանից:

Ծնունդով Երուսաղեմից Ժ. Ս. Հակոբյանի «Կոմիտաս՝ սրինգ երգարած» քերթվածում լսվում է. «Երգերի մեջ ծովի պես հնչող ամբողջ Նաիրին»: Քուրդ գրող-ազգագրագետ Ամինե Ավդալը (1906, Կարսի մարզ - 1964, Երևան) գրելու է Կոմիտասի մասին, որ վշտի և խնդության «մեծ սրնգահար»-ի երգը. «Զայնն է կյանքի և hավիտենության»: («Արև», Կահիրե, 1959:)

Մխիթարյան հայրերից մեծանուն հայագետ Ներսես Ակինյանը անվանի ձեռագրագետ հայր Հակոբոս Տաշյանի մասին գրում է. «Մեծ ու հոյակապ բանասեր Հակոբոս Տաշյանը կարճահասակ էր, բայց երբ կնվագեր (իսկ նա ընտիր սրնգահար էր), կքվար, թե նրա կծկված մարմինը բացվում ու երկարում էր»:

Միջնադարյան հայ մանրանկարիչը, պատկերելով փողահար= սրնգահար հրեշտակ կամ հովիվ, պատկերացրել է կոմիտասյան-բակունցյան հովվական փողի=սրնգի տեսակը, որի պատկերը տարբերվում է դուդուկի=նայի պատկերից: Միջնադարյան հեղինակները, մարգարեանալով «փող= սրինգ= բլուլ» նվագարանի մասին, նույնպես տվել են այդ հոգեթափանց նվագարանի նկարագիրը՝ զերծ պահելով մեզ ամենայն շփոթմունքից: Հիշատակենք միայն պատմահայր Մովսես Խորենացու անունը:

Նշենք, որ արդի հրատարակություններում. մասնագիտական, ակադեմիական, նվագարանագիտական, հանրագիտարանային բնույթի աշխատություններում շնչականմիափողնվագարանները, որոնք կնշվեն ստորև, բաժանվում են 3 ընտանիքի.

⊃21

20➲

1. ՍՐՆԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔ. օրինակ՝ հայկական ՍՐԻՆԳ=ԲԼՈՒԼ=ՓՈՂԸ: Այն երկու ծայրից բաց, պարզ փող է, սուլելու եղանակով օդը մղվում է փողից ներս և հնչյունը ծնունդ է առնում կենդանի շնչի և փողի հպումից: «Փողը ձայնում է ամենաբարակ շնչով անգամ», գրում է Կոմիտասը:

2. ԲԵՐԱՆՈՑՈՎ, ՇՐԹՆԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔ. օրինակ՝ ՇԵՓՈՐԸ: Այն ունի թասիկանման՝ ձագարաձև բերանոց, կցվում է փողին=իրանին, որպես հավելադիր մաս, հնչյունը առաջանում է թասիկանման բերանոցին սեղմված նվագողի շուրթերի տատանումից:

3. ԼԵԶՎԱԿԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔ. օրինակ՝ ԴՈՒԴՈՒԿԸ: Այն ունի լեզվակ, որը կցվում է փողին=իրանին, որպես հավելադիր մաս: Այդ լեզվակը պատրաստվում է եղեգնակից, որի մասնակի ճեղքումով ստացվում են զույգ եղեգնաթիթեղներ, և այդ եղեգնաթիթեղների տատանումից է առաջանում հնչյունը, որը տարբեր է սրնգային փողի հնչյունից:

Կոմիտասը լեզվակային նվագարանը և առանձնակի՝ «դուդուկը» կոչում է «նայ»: Արդյո՞ք նա նկատի է ունեցել այն բուն հայկական «նայ» բառարմատը, որ նշանակում է «խոնավ, թաց» (կատարողի խոնավ շնչից դուդուկ=նայի լեզվակը թրջվում է և լարվածքից ընկնում, ուստի այն փոխարինվում է մեկ ուրիշ լեզվակով), իսկ միգուցե Կոմիտասը նկատի է ունեցել պարսկերեն-թուրքերեն «նայ»-ը, որ նշանակում է նաև «եղեգնակ», որից և պատրաստվում է «դուդուկ=նայ»-ի լեզվակը: Այս մասին մենք տվյալներ չունենք: Սակայն Կոմիտասը զույգ լեզվակ ունեցող նվագարանները (մասնավորաբար՝ դուդուկը, զուռնան) համարել է օտար ժողովրդական երաժշտական լեզվամտածողությանը:

Նվագարանագիտական հանրագիտարանում զույգ լեզվակ ունեցող դուդուկ-նայի տեսակի նվագարանների մասին հաղորդվում է, որ դրանք ստեղծվել են ավելի ուշ, և հնչերանգը, ձայնածավալը՝ սահմանափակ են, որի հետևանքով դրանք հետագայում դուրս մղվեցին և փոխարինվեցին «առավել զգայուն նվագարաններով»: Ձայնագիտության ոլորտում կատարված ուսումնասիրությունները նույնպես ցույց են տալիս, որ մի ծայրից փակ նվագարանի դեպքում խամրում է իր հնչյունային գունապնակի մի զգալի մասը:

Հայ նվագարանագիտության հիմնադիրներից Արամ Քոչարյանը լեզվակային դուդուկին տվեց նոր անուն՝ «գլանափող«, «սրինգ» բառը վերապահելով բացառապես սրնգային ընտանիքին (ի դեպ, սրնգայիններից՝ «շվին» թուրքերեն կոչվում է «դուդուկ», ռուսերեն՝ «դուդկա», այն է՝ «սուլիչ», «շվի», իսկ «դուդուկչի» թուրքերեն նշանակում է շվիահար, շվի պատրաստող-վաճառող, սուլոց՝ սուլելով ազդանշան տալ, ռուսերեն=«дудеть»): Համաձայն ակադեմիական մասնագիտական հրատարակության, դուդուկ = նայ = գլանափողը՝ «փակ շենքի կատարման համար» է: «Գլանափողը զուրկ է օբերտոնային միջոցներից», - գրում է Ա. Քոչարյանը և նշում, որ «դուդուկ= գլանափողով հնչող մեղեդիները «հեռու են այն հեքիաթայնությունից ու թովչությունից, որով օժտված է հրաշագործ սրինգը: Սրինգն ավելի է ներգործում, երբ ունկնդրի միտքը պայծառ է»:

Սրնգային փողին, ինչպես նշվում է նվագարանագիտական հանրագիտարանում, «քարե դարից ևեթ վերագրվել է խորհրդական (միստիկ) բնույթ»:

Եվ այսպես, ի՞նչ խորհուրդ ունի «եղեգան փող»-ը Մովսես Խորենացու կողմից բերվող «Վահագնի ծնունդ»-ը նկարագրող դրվագում: Ակնհայտ է, որ «եղեգան փող»-ը երկու ծայրերից հավասարապես բաց է երկնքի և երկրի, ծովի և օդի համար, նրանից և ծնունդ է առնում բոցեղեն էությունը: Միջնադարյան մի աղբյուր հաղորդում է՝ վերհանելով մի դրվագ Սբ Սահակի և Սբ Մեսրոպի աշակերտներ «արեգակնակերպ Մովսեսի (Խորենացու) և Դավթի» վերաբերյալ, որոնք վերադառնալով Հայոց աշխարհ, այն ավերված տեսնելով, լալիս էին, և չգտնվեց մեկը, որ կարողանար մխիթարել նրանց. «Ահա փողք հնչողականք, - գրում է հեղինակը,- և ոչ ոք էր որ հարկանէր ...»: Ուշագրավ է, որ բառարանագիտական տվյալների համաձայն, հայոց բարբառներից մեծ մասում «փող» բառը նշանակում է՝ «խողովակ, փողոց, միջանցք, շնչափող», նաև՝ «սրինգ»: Միջնադարյան հայրաբանական գրականության էջերում սրինգի=փողի խորհրդական իմաստն է՝ մարգարե, մարգարեանալ: Ուստի վերը նշված հատվածը ընկալելի է թե՛ ուղիղ և թե՛ փոխաբերական իմաստով:

«Ծիրանի փայտ», «ծիրանափող» եզրերը՝ հասկացությունները ոչ վաղ անցյալ ունեն: Սակայն ակնհայտ է, որ հայոց մեծերը կյանքի բերելով «ծիրանափող» հասկացությունը, պատկերացրել են կոմիտասյան սրնգային փողի տեսակը:

Վերադառնալով «եղեգան փող»-ին, նշենք, որ Կոմիտասի նվագարանից՝ եղեգնյա փողը, նույնպես երկու ծայրից բաց, առանց լեզվակի փող=սրինգն է:

Նույնանման մի եղեգնյա սրնգային փող Սիրիայում, մի ճերմակահեր սիրիահայ՝ Սարգիսը, նվիրելով Նորայր Ժամհարյանին, խնդրում է թոռանը՝ իր գաղթական վանեցի պապից մնացած միակ հուշը՝ այն նվագարանը, որը մահանալիս նվիրել էր իրեն, վերադարձնել հայրենիք: Այժմ այն պահպանվում է Երևանի պետական կոնսերվատորիայում:

Իսկ այսօր մենք արդյո՞ք ի զորու ենք պաշտպանելու մեր նահատակ եկեղեցու և նահատակ Կոմիտասի ժառանգությունը, որը մինչ իր կյանքի վերջը (1935 թ.) իր վրայից չհանեց հայ հոգևորականի սքեմը: Որևիցե կասկածից վեր է այն, որ յուրաքանչյուր ազգ ունի ընդամենը մեկ մայրենի լեզու, ուստի և այդ լեզվի համեմատ հնչյուն՝ թե՛ խոսքի, թե՛ երգի, թե՛, հասկանալի է, նվագարանի, քանի որ այն ազդու միջոց է հնչյունի որակը ձևավորելու հարցում: Համաձայն Կոմիտասի, հնչյունը՝ «զարկերակը», ճշգրիտ հոգին է երգի: Նույնական են ժողովրդի լեզուն և երգը, «այնպես որ իրարից բաժանելն անհնարին է», քանի որ, ինչպես նշում է նա, խոսքը դանդաղեցնելով ստանում ենք երգ, երգը արագացնելով ստանում ենք խոսք: Ելնելով նշված դրույթից, որը նա խիստ կարևորում է, կարելի է հասկանալ և հիմնավորել Կոմիտասի հետևյալ դրույթը. «...Բոլոր ազգերն ալ՝ իբրև ազգային նուագարան՝ մէկ գործիք մը միայն կ՛ունենան ընդհանրապէս: Հայոց մէջ այդ ազգային նուագարանը փողն է, որ, պէտք է անգամ մըն ալ կրկնեմ, խորունկ ազդեցութիւն գործեց բոլոր համաժողովականներուն մէջ, իր պարզութեան մէջ պարփակուած վեհութեամբ»:

Այս տեսակետը նա հայտնեց միջազգային գիտաժողովից (Փարիզ, 1914 թ.) վերադառնալուց հետո, ուր նա գրավել էր բոլորի ուշադրությունը՝ չունենալով և ոչ մի ընդդիմախոս: Այնտեղ հավաքվել էին համաշխարհային ճանաչում գտած անվանի գիտնականներ, երաժշտագետներ, արվեստագետներ: Նրանցից մի մասի համար հայ երաժշտությունը ոչ միայն նորություն էր, այլև՝ «ապշեցնող նորություն», լույս, սակայն ոչ թե կիզող արեգակի, այլ՝ երկնային:

Ուստի հարց է առաջանում՝ նվագարաններից որը կարող է դառնալ ժողովրդի հոգու իրական արտահայտիչը, ներընդունել, բովանդակել լեզվի և երգի հնչյունի բոլոր նրբերանգները՝ ողջ գունապնակը: Պատահական չէ, որ Կոմիտասը բլուլ=ծիրանափող= սրինգ նվագարանով է կատարում հոգևոր և ժողովրդական երգերը՝ ներկայացնելով առանձնահատկությունները հայ հոգևոր և ժողովրդական երաժշտության, որոնք նա համարում է նույն արմատից, նույն ակունքից բխող, շատ վաղուց՝ քույր և եղբայր:

Կոմիտասի տեսակետը հստակ է. նա գտնում է, որ ժողովրդի նվագարանը կարող է լինել և հանդիսանալ որպես այդպիսին՝ սրնգային ընտանիքի նվագարանը, այն ընտանիքի, որն ունի ժողովրդի հոգու և սրտի չափ անհուն խորություն, անսահման բարձրություն և լայնություն: Այսպիսով, Կոմիտասին հաջողվում է պատասխանել խնդրահարույց և դժվարին հարցի, որը ուղղել է ուսումնասիրողի հայացքը դեպի Շումեր, Հին Եգիպտոս, Հին Հնդկաստան, Էգեյան (Կրետե-Միկենյան) Հունաստան:

Ուստի, կարծում ենք, եկել է ժամանակը՝ մեր հոգու թարգման նվագարանի՝ կոմիտասյան սրնգի վերաարժևորման՝ խթանելով նրա ընթացքը, որպես մեզանում անհետացող նվագարանի տեսակ, սրնգային մշակույթին տալով այնպիսի զարգացում, որպիսին ստացավ դուդուկ=նայը մերօրյա իրականության մեջ, որպեսզի Կոմիտասի հոբելյանը նշվի այսուհետև ոչ թե դուդուկ=նայով, այլ՝ կոմիտասյան փողով=սրինգով, որպեսզի մշակույթ-artexpo-ի գեթ մեկ տաղավարում ցուցադրվի գեթ մեկ նմուշ հինավուրց բուն հայկական՝ կոմիտասյան փողի տեսակի և հայը շփոթելու չլինի լեզվակային դուդուկ=գլանափող=նայը կոմիտասյան փողի= սրնգի= բլուլի= «ծիրանափողի»= «եղեգան փողի» հետ:

Գայանե ԴԱՆԻԵԼՅԱՆ,
երաժիշտ-մշակութաբան

ԼՍՈ՞ՒՄ ԵՍ, ԱՐԱՄ, ԿՌՈՒՆԿՆ Է ԵՐԳՈՒՄ

/Արամի և Մարիամ մորս հիշատակին/

Բարձր սարերի գոգի մեջ ծվարած գողտրիկ մի գյուղ: Սարերն առել են իրենց գիրկն ու մայրական քնքշանքով գուրգուրում են նրան: Հարավից փչող մարմանդ բորբ քամին օրորոցային քաղցր երգ է երգում նրա ականջին: Գյուղի բնակիչները ամենայն սիրով տանում են իրենց բաժին ընկած ամենօրյա հոգսն ու ցավը: Մեծ հողատարածություն ունենալու պատճառով յայլաները անչափ հեռու են գտնվում գյուղից: Գյուղն ունի բազմաթիվ յայլաներ՝ Աբուլգյոլ, Սաղամո, Քոռ-օղլի…, որը թվես: Ամենահեռուն Քոռ-օղլու յայլան է, որը գտնվում է բարձրադիր լեռների փեշի տակ: Ամպերին հասնող միգապատ լեռները մեջք-մեջքի տված ասես շուրջպար են բռնել Քոռ-օղլու բերդի տարածքում: Հպարտ կանգնած է բերդը իր դարավոր, անառիկ պատերով ու պարիսպներով: Պատերի քանդված տեղերում ճնճղուկները բույն են դրել, ձագ հանել: Հազար տարի է անցել ինչ այստեղ ձիերի սմբակների դոփյուն չի լսվել: Բերդ տանող ճանապարհի սալաքարերը մամռակալվել են, չմռել: Պարսպի մոտից սկսվում են ործաքարերը, ահագին մեծ շղթա են կազմում: Երբ սկսվում է գարնան ձնհալը, ձնաջրերը վազում են դեպի այդ ժնջլած քարե շղթայի մեջ: Ներքևում գտնվող կանաչ չաիրի պռնկին մի զուլալ ու պաղ աղբյուր է բխում այդ ձնաջրերից:

Չնայած 1935 թիվը չկա տարի էր, բայց յայլայում կթվորուհիները ամեն օր կթից հետո ավանդական քոչարի էին պարում: Գուցե դրանո՞վ էին հաղթահարում իրենց բաժին ընկած ծանր հոգսն ու դժվարությունները: Հովիվ Լևոնը /Լևեն/ գիտեր քաղցր նվագել: «Բոկի» կոչվող բույսից պատրաստում էր «Զռիկ» պկու ու այդ գործիքով նվագում էր հայկական պարեր, որոնք կոչվում էին «Վերվերի», «Քոչարի», «Աման Մարո»…: Կթվորուհիները այդ զռիկի նվագի տակ համ երգում էին, համ պարում:

Առավոտ էր, պայծառ առավոտ:

Արշալույսը շառագունել էր, արևը իր դեղին ոսկով ներկել էր բարձր լեռների կատարները: Բրիգադիր Հովհաննես Աբրահամյանը /Բորխոն/ ոչխարի հոտը բերել էր կթատեղ: Ուխալների մեջ ծով էր տալիս ճերմակ, փրփուր կաթը, ամեն ինչ պարզ էր, Հովհաննեսը լավ էր արածեցրել մաքիներին: Արևը բավականաչափ բարձրացել էր, շաղի կաթիլները մանյակի նման կախվել էին ծաղիկների վզներից, արևը սկսել էր գոլորշիացնել նրանց իր բորբով: Կթվորուհիներն իրենց հերթական պարն էին բռնել, երբ հայտնեցին, որ կթվորուհի Մարիամը իրեն վատ է զգում, հարկավոր է գյուղ տանել: Բայց կաթ տանող ֆուրգոնը գնացել էր: Այդ «հիվանդությունը» Աստվածն էր տվել Եվային /ցավով ծնանիս, մահով մեռանիս…/: Եվ այդ կթվորուհին էլ Եվայի ժառանգն էր, պիտի ցավով ծնաներ մի որդի, որի անունը պիտի կնքեր Արամ: Արամը պիտի մեծանար, սովորեր ու մարդ դառնար: Գյուղի կես ճանապարհին՝ բարձրիկ ու ծաղկաշատ սարալանջին ծնվեց այս «բախտավոր» Արամը:

Երբ այս գեղեցիկ սարալանջին ծնվեց Արամը, այդ պահին կռունկները վերադառնում էին հայրենիք՝ հեռավոր տաք երկրներից: Հիվանդ Մարիամին գյուղ տանող կանանցից մեկը կատակեց քիչ առաջ աշխարհ եկած Արամի հետ.

- Լսո՞ւմ ես, Արամ, կռունկն է երգում…

Կարծես ճչացող փոքրիկ Արամը լսեց կռունկների քաղցր ձայնը, անմիջապես ձայնը կտրեց ու նայեց դեպի պայծառ ու արևահամ երկնքում թռչող կռունկներին:

Անցան տարիներ: Արամը մեծացավ: Մեծացավ նաև մեր հայրենիքի վրա գերմանական ֆաշիստների հարձակվելու ցանկությունը: Արամը դեռ դպրոցական չէր, երբ սկսվեց մեծ Հայրենականի ահեղ պատերազմը: Արամի հայր Ներսեսն էլ /Կուբլոն/, թողնելով իր միունճար որդուն, հայրենասերների հետ գնաց կռվելու թշնամու դեմ: Պատերազմը որբացրեց Արամին: Հայրը՝ Կուբլոն իր ավագ եղբոր՝ Սիմոնի հետ զոհվեցին Կերչի ճակատամարտում: Իսկ կրտսեր եղբայրը՝ Արարատը վերադարձավ հաշմանդամ դարձած:

Արամը հասկացավ, որ միակ ելքն ու փրկությունը սովորելու մեջ է, դրանով միայն կարելի է հաղթահարել ամեն մի դժվարություն կյանքում: Հենց առաջին դասարանից սկսեց գերազանց սովորել: Արամը արտակարգ ընդունակության տեր երեխա էր: Նույնիսկ ուսուցիչները չէին թաքցնում իրենց զարմանքը: Չնայած Արամը որբացել էր հորից, բայց հոգատար տատիկն ու պապիկը մոր հետ մեկտեղ խնամում էին նրան: Ամեն ինչ անում էին, որ Արամը իրեն որբ չզգա, լավ սովորի ու մարդ դառնա: Արամը, իր ծնողների միակ զավակը լինելով, պապիկի ու տատիկի կողմից բռների մեջ էր պահվում: Ստեփան /Տեփո/ պապիկը հասլած կաշվից Արամի համար սիրունիկ չարոխներ էր կարում: Իսկ Բեռնիկ տատիկը սպիտակ բրդից տաք գուլպաներ էր գործում Արամի համար:

Մի պայծառ մայիսյան առավոտ էր: Արամը, բոլոր դասերն անգիր արած, գնում էր դպրոց: Հանկարծ լսվեց կռունկների քաղցր ձայնը.

- Կըռ-կռու, կըռ-կռու…

Կանգ առավ ու ինքն իրեն շշնջաց. «Լսո՞ւմ ես, Արամ, կռունկն է երգում» ու հայացքը հառեց պայծառ ու ջինջ երկնքին, դեպի թռչող կռունկները: Եվ հանկարծ մտաբերեց Տեպո պապի պատմածը, ու մի քար շուռ տվեց: Կռունկների երամը խառնվեց իրար: Մի քանի պտույտ տվեցին, նորից կազմեցին «Սելի մուրուք» շարանը ու շարունակեցին իրենց երկար ճանապարհը: Ուրեմն պապիկը չէր խաբել իրեն, ճիշտ դուրս եկավ նրա պատմածը: Փոքրիկ Արամը անչափ գոհ մնաց, որ իրեն ստացվեց այդ «հրաշքը»: Արամը դեռ պիտի պատմեր իր համադասարանցիներին այդ հրաշքի մասին: Այդ օրվանից նա երդվեց, որ մի ոտանավոր պիտի գրի այդ քաղցրակռինչ, գեղեցիկ թռչունների մասին: Եվ կատարեց իր ինքնախոստումը, գրեց այդ ոտանավորը.

КԱՐՈՏԻ ԿՌՈՒՆԿԸ

Պանդխտի կարոտով լցված սրտերին
Հար կռունկն է եղել մխիթարողը,
Հիշեցրել է հեռու ընկած հայրենին,
Եղել է կարոտի հունդեր ցանողը:
Ահա անցնում են, հուզիչ է կանչը
Դիպչում է սրտիս մազալարերին,
Նրանք են իմ կարոտի երգիչը,
Նրանց ձայնին է հնչում հայրենին:

Արամը դեռ չորրորդ-հինգերորդ դասարանում էր սովորում, երբ լսեց մի անսպասելի ու ցավալի լուր. Արամի մայրը ուզում էր ամուսնանալ: Չէ՞ որ նա դեռ ջահել էր, ընդամենը 32 տարեկան՝ գեղեցկության ու ջահելության ավյունը վրան: Պատերազմը վաղուց վերջացել էր, Արամի մայրը սպասել էր ամուսնու վերադարձին՝ «ով գիտե, գուցե վերադառնա՞ շատ-շատերի նման»: Չնայած «սև գիրը» ստացել էր, բայց դարձյալ չէր հավատում, ինքն իրեն հուսադրում էր. «գուցե անհայտ կորած է՝ շփոթել են ուրիշի հետ՝ կենդանի՞ է»:

- Ախ, այդ գուցեն…

Բազմաթիվ ենթադրություններ կարելի էր անել, բայց փաստը մնում էր փաստ, որ երկրորդ թուղթն էր եկել ճակատից: Արամի մայրը ամուսնանում էր Սպիրիդոն Քաշանյանի՝ տողերիս հեղինակի հոր հետ, որի ջահել կինը մահացել էր վերջերս, թողնելով յոթ անբախտ որբերի ամուսնու խնամքի տակ: Յոթ անչափահաս որբերին խնամել, կարել, կարկատել էր պետք: Ետպատերազմյան տարիներ էին, սով էր ամենուր, տիֆ, քոր: Մի նոր գթառատ մայր էր հարկավոր, որ փոքրիկները կուճուրվեին նրա թևերի տակ: Մայրական ջերմություն ու քնքշանք զգային, որ չմնային բախտի քմահաճույքին: Նախքան այդ քայլին դիմելը Մարիամին հարկավոր էր լավ մտածել: Նրա հարևաններն ու բարեկամները փոշմանեցնում էին նրան: Առանձնապես սկեսրարն ու սկեսուրն էին դեմ Մարիամի այդ քայլին: «Մենք քեզ մեր աղջկա նման կպահենք մեր տանը, չենք նեղացնի, ինչո՞ւ ես այդպիսի բաներ մտածում: Նստիր տանը, մեծացրու մեր սիրելի թոռնիկին, դրանով կբուժես մեր վիրավոր սրտերը և վառ կպահես ամուսնուդ հիշատակը: Դարդդ ի՞նչ, որ թողնես քո աչքի միակ լույսը ու գնաս ուրիշի որբերին շահես ու պահես»: Բայց Մարիամը չլսեց նրանց քարոզներին ու ասեկոսներին: Նա բարի սրտով մտավ այդ որբատունը, որտեղ լաց ու հառաչանք կար: Նա ամենայն սիրով ու մաքուր խղճով խնամեց, մեծացրեց այդ յոթ անմայր որբերին /անկորուստ/: Բայց Արամի վրա այդ հարվածը անչափ ազդեցիկ էր: Արամը մնաց պապիկի, տատիկի ու հորեղբոր խնամքի տակ:

Արամը դեռ վեցերորդ դասարանում էր սովորում, երբ սիրահարվեց մի սևաչյա, սիրունիկ, երկարածամ աղջկա վրա: Ու այդ օրվանից նրանց սրտերում վառվեց սիրո լույսը: Վարվառան էլ Արամի նման սովորում էր գերազանց: Նա բախտավոր աղջիկ էր, Արամի նման որբության դառնություն ճաշակած չուներ: Ճիշտ է հայրը զոհվել էր Հայրենական մեծ պատերազմում, բայց մայրը տղաների հետ մեկտեղ խնամում էին նրան: Նրա եղբայրները ապրում էին Մախառաձեում: Նրանք իրենց գերազանցիկ քույրիկին ոչինչ

չէին խնայում, նոր մոդայիկ հագուստներ էին ուղարկում:

Վարվառան ու Արամը տասներորդ դասարանում էլ էին գերազանց սովորում: Նրանց անկեղծ սիրո մասին դպրոցն ու ողջ գյուղը գիտեր: Բոլորն էլ հավանություն էին տալիս նրանց սիրո պայմանին: Նրանք գյուղի միջնակարգն ավարտելու վրա էին, երբ նրանց անկեղծ ու մաքուր սիրո բաժակի մեջ ուրիշները ցանկացան թույն կաթեցնել: Բանակից նոր զորացրված մի երիտասարդ, առաջին անգամ տեսնելով, սիրահարվեց Վարվառայի վրա: Երիտասարդը ինչքան էլ մարդ մեջ գցեց՝ ապարդյուն, մի խոսք անգամ հասկացնել չկարողացան աղջկան: Վարվառան ասել էր, որ ինքը սիրում է Արամին, միայն մահը կարող է իրենց իրարից բաժանել: Արամի սիրտը Վարվառայի նկատմամբ չսառավ երբեք: Աղջիկը սիրում էր նրան իր անկեղծ ու մաքուր սիրով:

Արամը գյուղի դպրոցը ավարտեց գերազանց գնահատականներով ու գնաց Երևան՝ ուսումը շարունակելու: Քննություններից ուշանալու և համապատասխան տեղեկանքներ չունենալու պատճառով Արամին չէին գրանցել ընդունելության ցուցակում: Կոնկուրսից չէր անցել: Բայց առանց թույլտվության նա նստեց դասի: Դասախոսների հետ երկար վիճաբանությունից հետո և Արամի բազմաթիվ դիմումների հիման վրա ընդունելության հանձնաժողովը ստիպված է լինում քննություն վերցնել նրանից: Արամը չորս առարկայից ստանում է տասնվեց բալ, որը իրավունք է վերապահում նրան դասի նստել: Արամը դարձավ Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի կենսաբանա-քիմիական ֆակուլտետի ուսանող: Ու նրա նկարը ամբողջ սովորելու ընթացքում պատվո տախտակից ցած չիջավ: Նույնիսկ լուսանկարեցին Արամին դասախոսների հարցերին պատասխանելու ժամանակ:

Արամը ինստիտուտն ավարտեց կարմիր դիպլոմով: Ավարտելուց հետո Արամին առաջարկեցին, որ դասավանդի նույն ինստիտուտում: Նաև առաջարկություն եղավ ուսումը շարունակել ասպիրանտուրայում: Բայց Արամը մերժեց նրանց առաջարկությունը: Նա ուզում էր վերադառնալ հայրենի գյուղ, որտեղ ուսուցչի անչափ կարիք կար:

Բայց հանգամանքները նրան տարան ուրիշ ճանապարհով: Ջավախեցի տղաները, որոնք և սովորում էին Երևանի տարբեր գիտական հաստատություններում, առաջարկեցին Արամին, որ աշխատեն միասնաբար: Նրանք չորսն էին, յուրաքանչյուրն իր մասնագիտությունն ուներ: Արամը «լողում էր» քիմիայի մեջ, իսկ մնացած երեքը հայոց լեզվի, մաթեմատիկայի և ֆիզիկայի մասնագետներ էին: Այս խումբը կազմվել էր, որ ինստիտուտ ընդունվել ցանկացողների տեղը իրենք հանձնեին քննությունները և դրա փոխարեն մեծ գումար ստանային: Առաջին էքսպերիմենտալ փորձը հաջող անցավ և նրանք մտածեցին, որ լավ սկիզբը գործի կեսն է: Ու անցան գործի: Նրանց տունը դարձավ «Սևան» ռեստորանը: Նույնիսկ մի բաժակ սառը ջուր խմելու համար ռեստորան էին մտնում: Նրանց զբաղմունքը եղան գեղեցիկ կանայք և հայկական ընտիր կոնյակը: Անազնիվ ճանապարհով վաստակած փողերը շռայլվում էին աննպատակ: Ինչպես ժողովրդական առածն է ասում. «Քամու բերածը քամին է տանում»: Նրանք ունեին բազմաթիվ բաժակի ընկերներ ու երկրպագուներ, որոնց հաճախ հյուրասիրում էին հայկական ընտիր կոնյակներով: Երբ ռեստորանում քեֆ էին անում աղա տղաներով, միշտ Արամն էր հաշիվը փակում: Նա փողը չէր հաշվում, դա վայել չէր իր նման մարդուն: Նա մի քանի տուփ գցում էր սեղանին և դուրս գալիս: Երբ հյուր էր գնում ընկերների տուն, գրկում էր երեխաներին ու յուրաքանչյուրին մի-մի հարյուրանոց էր նվիրում: Երևի դա գալիս էր նրանից, որ ինքը ժառանգ չուներ: Գուցե դա էր պառճառը, որ Արամը գնաց ծուռ ճանապարհով:

Վարվառան էլ, ավարտելով գյուղի միջնակարգը, ուսումը շարունակեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական բաժնում: Արամն իր ընկերների հետ շարունակում էր «բարեգործական» աշխատանքը:

Հետո Արամը սկսեց գործել մենակ՝ երկպառակություն էր ընկել իր և ընկերների միջև, բաժանվել էր նրանցից: Նա այժմ գործ ուներ ռեկտորների և ընդունելության հանձնաժողովների նախագահների հետ: Նա կարող էր ցանկացած դիմորդի ընդունել տալ ցանկացած ինստիտուտ, միայն թե իր առաջարկած գումարն ստանար:

Երևանի «Սևան» ռեստորանից դուրս գալով, քեֆը տեղը, կերած-խմած Արամը խաչթև արած զբոսնում էր շիկահեր ու հիասքանչ, փղոսկրի պես փայլուն, մաքուր ատամներով, գեղեցիկ աչքերով մի աղջկա հետ, որի բարակ մեջքի արծաթյա գոտին վարվռում էր բորբ արևի փայլից, և այդ փայլի մի մասը հայելապատում էր այդ գեղեցիկ էակի դեմքը: Հանկարծ լսվեց կռունկների ձայնը:

- Կըռ-կռու, կըռ-կռու...

Արամը թևն ազատեց աղջկա թևից, թևերը պարզեց դեպի անամպ, ջինջ երկինք ու բարձրաձայն մանկական ձայնով բացականչեց. «Լսո՞ւմ ես, Արամ, կռունկն է երգում»: Ասֆալտապատ Երևան քաղաքում նա քար չգտավ, որ շրջեր, բայց հանկարծ կռունկների երամը խառնվեց իրար՝ մինչ այդ շարան-շարան լողում էին կապույտ երկնքում: Կռունկների իրար խառնվելը անհասկանալի ու զարմանալի թվաց Արամին: Բայց շուտով նա պատկերացրեց, որ մի տեղ, մի քարքարոտ դպրոցի ճանապարհին մի փոքրիկ, չարաճճի տղա քար է շուռ տվել: Այդ պատճառով էլ կռունկները իրար էին խառնվել:

Քանի օրերն անցնում էին, Արամն այնքան շատ էր խորասուզվում այդ գարշահոտ տիղմի մեջ: Հետզհետե վրդովմունք ու բողոքներ էին հայտնվում Արամի հասցեին: Եվ այդ բողոքները տարիների ընթացքում կուտակվեցին ու բազմացան, բազմազանվեցին ու քրեական գործ հարուցեցին նրա դեմ: Պարզ էր, որ Արամը մենակ չէր շորթում այդ փողերը, բայց ամեն ինչ նա վերցնում էր իր վրա: Նա երբեք չէր կասկածում, որ մի գեղեցիկ օր պատասխան պիտի տար այդ ամենի համար:

Մի անգամ իրիկնապահին Արամը, ռեստորանից դուրս գալով, կիսահարբած վիճակում, տուն գնալու փոխարեն բռնեց Ավետիք Իսահակյանի այգու ճանապարհը: Նա չգիտեր, որ իրեն վաղուց հետևում էին: Գիշերեց նստարանի վրա՝ պարզ երկնքի տակ: Առավոտյան սթափվեց, զգաց, որ փողերը գրպանից տարել են: Երբ համոզվեց, որ փողերը գողացել են, իրեն-իրեն շշնջաց.

- Գողը գողից գողանա, Աստված վերև զարմանա...

Երբ դատախազը հարցրեց Արամին, թե ի՞նչ է վերջին անգամ խնդրում դատարանից, նա ասաց. «Ով ուրիշի ճամփով կերթա, կսայթաքի, վայ նրան»: Այո, Արամը գնացել էր ուրիշի ճամփով, սայթաքել էր ու այլևս չվերկացավ: Այստեղ տեղին է Պարույր Սևակի խոսքը. «Ինչքան տաղանդներ տականքներ դարձան, հաշվել են արդյոք...»:

Ռեստորանի արծվին այժմ վանդակի մեջ էին դրել, հավատալո՞ւ բան էր: Չսափրված, կարճ մորուքով Արամը թախծոտ ու գլխիկոր, դանդաղ քայլերով քայլում էր բանտախցում: Արամն իմացավ, որ բանտապետի երիտասարդ կինն ուզում է իրավաբանական ֆակուլտետ ընդունվել: Արամը ընդառաջեց նրան, մի քանի բառ գրեց թղթի վրա ու հանձնեց պետի կնոջը: Մի քանի օր հետո բանտապետը Արամին կանչել տվեց իր մոտ, հայտնեց, որ իր կնոջն ինստիտուտ են ընդունել: Նա խորին շնորհակալություն հայտնեց Արամին այդ բարեգործության համար և խոստացավ նրան աչքի տակ ունենալ: Բանտում Արամը դարձյալ գտավ իր տեղը: Նա սկսեց աշխատել որպես դաստիարակ: Արամը գործերը լավ դասավորելուց հետո հեռագրեց գյուղ, որ հարկավոր է Րաֆֆու յոթերորդ հատորը: Հասկանալի էր, որ Արամին փող էր հարկավոր՝ յոթհարյուր ռուբլի, բանտից դուրս գալու համար:

Երբ Արամը բանտից տուն վերադարձավ, նրա զարմանքը մեծ եղավ, երբ տեսավ, որ իր անձնական գրադարանը տեղն է: Արամի կորուստը մեծ կլիներ, եթե բաժանվեր այնպիսի աշխարհահռչակ գրողների գրքերից, ինչպիսիք էին Կիպլինգը, Ռիլկեն, Իսահակյանը, Ապոլիները, Էլյուարը...

«Ջուրն իր գնացած ճամփեն չի մոռանա»: Արամը կրկին շարունակեց իր խաղը: Այս անգամ թանկ գներով սկսեց իր վաղեմի միջնորդության գործը: Կրկին վերադարձավ բանտ՝ բետոնե սառը պատերով, խոնավ հատակով ու առաստաղով: Այս անգամ նա իրեն չէր ափսոսում, չէր ներում:

Դարձյալ մայիսն էր: Բայց այս մայիսը նման չէր ոչ դպրոցական տարիներին, և ոչ էլ ռեստորանների ճոխ սեղանների մայիսին: Այս մայիսը դաժան էր, մարդկության ճանապարհից խոտորվածի, ապագան կորցրածի մայիս էր: Արամը բանտի մենախցում մեջքը դեմ էր արել անհարթ բետոնե պատին ու քանդել հուշերի կծիկը: Մտքով տեղափոխվել էր հայրենի գյուղ, մտել էր դասարան: Մռայլ հայացքով նայում էր իր վաղեմի նստարանին, որի հետ ինքը ուսում ու հասակ էր առել: Մի՞թե գիշեր ու ցերեկ կարդացել, սովորել էր դասերը, ձեթի աղոտ լույսի տակ ծախսել աչքերի թանկագին լույսը այս մենախցին տիրանալու համար: Նրա երազանքը այդ չէր եղել երբեք, վատ մարդիկ փշրեցին նրա փայլուն երազանքները, պղտորեցին վառ մտքերը: Արամը այս մենախցում շատ պիտի մեղանչեր ու զղջար իր արածի համար, եթե հանկարծ նրա ականջին չհասներ կռունկների քաղցր ու կարոտագին ձայնը.

- Կըռ-կռու, կըռ-կռու...

Արամը կտրուկ շրջվեց դեպի մենախցի անցքը, որտեղից դժվարությամբ էր ներս թափանցում կռունկների առինքնող ձայնը, ու... «Լսո՞ւմ ես, Արամ, կռունկն է երգում», ինքն իրեն շշնջաց, հայացքը ցած բերեց, արցունքի երկու կաթիլ ընկան բետոնե պաղ հատակին ու նռնակի նման պայթեցին. «Էս ինչ օրն ես ընկել, Արամ»: Այս հոգեցունց ինչ-

➲24

23➲

յունները արծագանքվեցին բետոնե անհարթ պատերին, դուրս թռան այն նեղ անցքից ու ցնդեցին միգասքող երկնքում թռչող կռունկների լայն պարզած թևերի տակ:

Արամի մայրը՝ Մարիամը, մղկտում ու կրկնում էր.

- Արամսի աշխարհի խելքն ուներ, իտմլ կորուստ չը երտեր, եթե երեխա ունենեն:

Եկեք համաձայնվենք Արամի մոր ասածին, քանի որ միայն Արամը չէր, որ երեխա չունենալու պատճառով զոհ դարձավ: Հազարավոր մարդիկ զահավիժել են այդ նույն պատճառով, սայթաքել, ընկել գիտության բարձունքներից: Հիշենք Հովհաննես Շիրազի խոսքը. «Առանց երեխա տունը՝ ինչպես վանքն առանց զանգակատան»:

Երբ Արամն զգաց, որ Երևանը խորթացել է իր նկատմամբ, որոշեց հայրենի գյուղ վերադառնալ: Գյուղում ուներ մայր, հորեղբայր, իսկ սիրելի պապիկն ու տատիկը վաղուց մահացել էին: Գյուղում Արամին առաջարկեցին հարազատ դպրոցում քիմիա դասավանդել, բայց նա կտրուկ մերժեց այդ առաջարկությունը: Մի քանի ամիս գյուղում ապրելուց հետո նա կրկին վերադարձավ Երևան, որտեղ տուն ու ընտանիք ուներ: Աշխատանքի ընդունվեց մի հիմնարկում, բայց հարբեցողությանը վերջ չտվեց: Այդ հարբեցողությունից էլ հանկարծամահ եղավ:

Արամին թաղեցին իր ծննդավայրում՝ սիրելի պապիկի ու տատիկի կողքին:

Անդրանիկ Անտոնյանը մարմարե մի շիրմաքար դրեց Արամի անմռռաց շիրիմին այսպիսի խորիմաստ ու թախծով զրնգացող բառերով.

«Ով ուրիշի ճամփով կերթա, կսայթաքի, վայ նրան:
Ով կսայթաքի ու վեր չի կենա, գենա վայ նրան»:

Աշուն էր: Հայրենի սարերը բաժանվում էին իրենց կանաչ հագուստից: Սառը քամին էր փչում հյուսիսից, կռունկները իրենց ձագերի հետ հեռանում էին հայրենի երկրից:

- Կըռ-կռու, կըռ-կռու...

Հողաթումբը կարծես կանչում էր ողբաձայն. «Լսո՞ւմ ես, Արամ, կռունկն է երգում...»:

Վերջ

1987 թ.

Դիվին ՔԱՇԱՆՅԱՆ
գ. Հեշտիա

Անկեղծ զրույց՝ հասարակական հնչեղության երկու հարցերի շուրջ

Հոգեբանությունը սովորաբար զարգանում է հասարակության ճգնաժամային պահերին, երբ մարդիկ զանգվածաբար դառնում են սոցիալական, տնտեսական դժվարությունների, արտակարգ պատահարների ու աղետների կամ պարզապես անկատար հասարակության զոհերը: Պարզության համար ասենք, որ հոգեբանն այն մասնագետն է, որ ի տարբերություն հոգեբույժի, առանց դեղորայքի, զուտ հոգեբանական մեթոդներով ու հնարքներով, կարողանում է հետազոտել ու ներգործել մարդու վրա եւ հանել ընկճվածությունից, մտասեւեռումից, չի թողնում, որ այդ վիճակը խրոնիկական դառնա: Հոգեբանին այցելությունը մարդուն կարող է հետ պահել ճակատագրական իրադարձություններից, ընդհուպ ինքնասպանությունն ու հոգեկան որեւէ հիվանդություն՝ փսիխոզ կամ շիզոֆրենիա վաստակելու հավանականությունը:

Ի տարբերություն Հայաստանի՝ քաղաքակիրթ արեւմուտքում այդ ծառայությունները հոգեբանական խնդիրները լուծելու սովորական ճանապարհ են եվրոպացու ու ամերիկացու համար, եւ նրանք դրանց դիմում են ինչպես սովորական բժշկի: Հոգեբանական ծառայություններն այստեղ լայնորեն օգտագործվում են նաեւ բանակում: Հատկապես պատերազմների դեպքում, հատուկ ներշնչանքների միջոցով զինվորների ոգին են բարձրացնում:

Հայաստանում հոգեբանական ծառայություններ առաջացան երկրաշարժից հետո, եւ ինչպես ստեղծվել էին, այնպես էլ վերացան: Այժմ դրանցից 5-6-ն են մնացել: Բայց այս մասնավոր ծառայություններն անարդյունավետ են գործում: Այս կարգի ծառայություններ ունենալու ավանդույթը խորթ է մեր ազգային մտածելակերպին:

Հայերս հոգեբանական բուժման հարցը ավանդաբար լուծում ենք այլ կերպ՝ մեր բարեկամների, մտերիմների, հարազատների հետ կիսվելով: Նրանք սովորաբար համբերատարությամբ լսում են մեր դարդ ու ցավը եւ տեղին կամ անհարկի խորհուրդներ տալիս: Սակայն անվճար հոգեբանական խորհրդատվություն տվող մերձավորների քանակը Հայաստանում աստիճանաբար նվազում է: Եվրոմիության հեռանկարին մոտենալու հետ խզվում են ավանդական կապերը, եւ հոգեկան խնդիրներ ունեցող մարդը մնում է



Նարինե Մարտոյան

միայնակ: Մենք այլեւս հրաժարվում ենք նույնիսկ մերձավոր հարազատին վշտակցել՝ լրացուցիչ բացասական լիցքեր ու լարվածություն չստեղծելով մեզ համար: Արեւմուտքում տիրող բարքերն աստիճանաբար ներխուժում են նաեւ Հայաստան: Մինչդեռ հոգեբանական սուր աջակցության կարիք մարդն իր կյանքի որեւէ փուլում անպայման զգում է: Հոգեբանների համոզմամբ, նույնիսկ եթե մարդու կյանքում արտակարգ պատահարներ չեն լինում, տարիքային ճգնաժամեր, այնուամենայնիվ, 90 տոկոսն ապրում է 20-30, 30-40, 40-55, 55-65 անցումային շրջաններում: Դրանց հետեւանքը ոչ միայն ֆիզիոլոգիական փոփոխություններն են: Մարդը դառնում է բոլորովին այլ անհատ՝ փոխվում է նրա պահանջմունքների համակարգը, եւ նա պիտի հարմարվի նոր իրադրությանը: Բացի այդ, մասնագետների ասելով, Հայաստանում յուրաքանչյուր 4-րդ մարդ տառապում է դեպրեսիայով:

Հոգեբանական ծառայությունների առկայությունը նաեւ ամենապարզ պատճառն ունի:

Սոցիալական պայմանների հետ կապված, մարդիկ նույնիսկ բժշկի դիմում են ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, ուր մնաց հոգեբանի: Այս ոլորտում ֆինանսական ներդրումների անհրաժեշտությունը դեռեւս հստակ չի գիտակցվում: Ընդհանրապես գործարարները չեն էլ մտածում այս մասին, եկամտաբեր ոլորտ չէ: Բայց ժողովուրդն սկսել է ավելի շատ դիմել, սկսել է հասկանալ: Սակայն կազմակերպված ծառայություն, որը մշակի որոշակի ստանդարտներ, կրի որոշակի պատասխանատվություն, չկա: Հոգեբանական ծառայությունների դաշտը նաեւ օրենսդրական կարգավորվածություն չունի, հոգեբանի կարգավիճակի, նրա որակավորման հետ կապված օրինագծերի նախագծեր կան, բայց ԱԺ չեն հասել: Հետեւանքը նաեւ առանց լիցենզիաների, կամայական գործունեությամբ զբաղվող դիլետանտների առատությունն է:

Վերջին շրջանում նրան շատ են դիմում կազինոների հաճախորդները, 15-25, 40 տարեկան անձինք, որոնք վարակվել են խաղամոլության ախտով: Այդ կարգի կախվածությունները հաճախ հեշտությամբ ոչնչանում են հիպնոսի կիրառմամբ: Հոգեբանի համոզմամբ, այս կարգի պրոբլեմները պայմանավորված են մանկական դիրքորոշումների, մանկական մտածելակերպի պահպանումով հասուն մարդու մեջ, երբ նա, ինչպես երեխա ժամանակ, երազում է մեծ գումարներ շահել: Չնայած այդ մարդկանց մեջ կան կիրթ, ինտելեկտուալ մարդիկ, բայց դա էլ չի խանգարել, որ նրանք պահպանեն հեքիաթներին հավատալու սովորությունը:

Շատ շուտով մայրաքաղաքը կունենա իր հոգեբանական ծառայությունների կենտրոնն, ուր բացի վերոնշյալ հարցերից, մասնագետները կզբաղվեն ընտանիքում զույգերի դերի, առհասարակ՝ ընտանիքին վերաբերող ցանկացած խնդրով: Նշենք, որ այն իր տեսակի մեջ կլինի առաջինը հանրապետությունում:

Ընտանիքը հոգեբանական տեսանկյունից բավական հզոր, բայց և փխրուն համակարգ է: Կյանքն սկսվում է ընտանիքում: Այն նման է լաբիրինթոսի, որտեղ ապրելու, արարելու, կողմնորոշվելու համար անհրաժեշտ է միջանձնային փոխհարաբերությունները հոգեբանորեն գրագետ կառուցելու հմտություններ ուսուցանող որևէ կառույց: Այսօր, հասարակական-քաղաքական բարդ պայմաններում, ընտանիքը՝ լինելով հասարակության կարևորագույն բջիջը, մնացել է միայնակ իր խնդիրների հետ:

Հայաստանում 81.7%-ի դեպքում ընտանեկան վեճերը տեղի են ունենում ամուսնու և կնոջ միջև, 54.9%-ի դեպքում՝ մոր և երեխաների, 48.8%-ի դեպքում՝ հոր


➲25

ԼՈՒՍԱՎՈՐ ՈՒ ԽԱՎԱՐ ԹԲԻԼԻՍԻՆ

Մեկ լարի. Հենց այսքան արժե մեկ գավաթ սառը սուրճը Թբիլիսիի երբեմնի հայկական Ավլաբար թաղամասում, երբ վաճառողն իմանում է, որ դու օտարերկրացի ես: Իսկ սովորաբար մեկ գավաթ սառը սուրճը Կովկասի ամենաթանկ՝ Վրաստանի մայրաքաղաքում արժե ութսուն տերրի:

Ավլաբար-օփեն

Նեղլիկ փողոցներով Ավլաբար, ավելի ճիշտ՝ Ավլաբարի, ավելի արդարացի՝ կրկին Հավլաբար: Այս թաղամասում ամբողջովին կարելի է տեսնել Թբիլիսին, հիշել հին Թիֆլիսը: Կախովի, դուրս ցցված պատշգամբներից կարող է թվալ, որ «աղջիկ-պարոնները» քննարկում են դուքաններում հայտնված նոր շլյապաները կամ անցնող տղամարդու բեղ-մորուքը: Սակայն դա միայն կարող է թվալ. Երբ հայացքդ կտրում ես Թիֆլիսը հիշեցնող պատշգամբներից, ամեն ինչ ես տեսնում՝ դուքանները՝ էստի համեցեք գոչողներով, դրանք հիմա «Օփեն» մակագրությամբ խանութներ են, որտեղ եթե օտար ես, ապա բարի եղիր խոսել միայն անգլերեն, վճարել ավելի ժլատ: Հավլաբարի սալահատակ փողոցներում այլևս չես լսի ֆայտոնների կտկտոցը. Հավլաբարն այլևս Ավլաբարի է:



«Բարեւ ձեզ, ո՞նց եք»

Վրացական դրոշն ամենուր է, խանութների, պանդոկների, անգամ բնակարանների վրա: Այս մեկը, սակայն, փոքր-ինչ ավելի մեծ էր՝ կախված խանութի պատից: Անցնում էինք խանութի մոտով, հեռվից էլ զգացվում էր՝ իրար դիմաց նստած երկու կանայք ակտիվորեն քննարկում էին ինչ-որ բան: Երբ մոտեցանք, լսեցինք նրանց խոսակցությունը. «Բա իմացա՞ր, Նունիկի մարդը գնացել է Ռուսաստան, Նոր տարվա մոտ նոր գալու է», հավլաբարցի այս երկու կանայք խոսում էին հայերեն: Մոտեցանք, «Բարև ձեզ, ո՞նց եք», հարցնում ենք... Երբ գրվել է «Հայի աչքերը» երգը, հեղինակը թերևս նկատի է ունեցել նաև այս կանանց աչքերը, երբ հայերեն լսեցինք: Այստեղ արդեն վերականգնվեց հին ու իրական Հավլաբարը՝ իր ավանդական էստի համեցեքով. Կանայք մեզ խանութ հրավիրեցին, ամեն ինչ իրենց գներով վաճառեցին, ես էլ նույնիսկ անվճար սառը սուրճ ստացա: «Արխային հայերեն խոսեք, ձեր ցավը տանեմ. Մենք մերոնցով ենք», - ասաց կանանցից մեկը: Խանութից դուրս գալուց հետո, երբ քննարկում էինք հավլաբարցի հայուհիներին, փողոցի անկյունից ամբողջովին սև հագած մի կին, վրացերեն ինչ-որ բան մրմնջալով, դեպի մեզ եկավ: Հայ լրագրողներիցս մեկը, հասկանալով կնոջ ով լինելը, ասաց՝ մուրացկան է: «Հա, բալեք ջան, մուրացկան եմ, հայ եմ, մի քիչ օգնեք», վրա բերեց կինը հայերենով: Օգնեցինք, սևազգեստ կնոջ փոխարեն պատասխանեցինք բոլոր թիֆլիսահայերին ուղղված մեր իսկ հարցին. «Բարև ձեզ, այնքան էլ լավ չենք:

Լույս, խավար, լույս, խավար...

Սամեբա (Սուրբ Երրորդություն). Հիրավի նոր Թբիլիսիի խորհրդանիշ: Հավլաբար-Ավլաբարիի հենց սրտում վեր խոյացող վրաց ուղղափառ հրաշք եկեղեցին տեսանելի է քաղաքի բոլոր անկյուններից, իսկ գիշերը իր անմոռանալի լուսավորվածությամբ ամրագրում է՝ Վրաստանը քրիստոնյա երկիր է: Եվ սա անկախ նրանից, որ այդ քաղաքում կան մի քանի մզկիթներ, իրեական տաճար... Գիշերային

➲26

➲24 *Անկեղծ զրույց՝ հասարակական հնչեղության երկու հարցերի շուրջ*

և երեխաների, 21.6%-ի դեպքում՝ հարսի և սկեսրոջ միջև:

Աշխարհում 10 ամուսնություններից 7-ը ավարտվում է բաժանությունով, Հայաստանում՝ 10-ից 4-ը: Ցուցանիշը գուցե ավելի քիչ է, բայց այն ավելանալու միտում ունի:

Այժմ խոսենք հայի համար ցավոտ մի խնդրի շուրջ, որ կոչվում է «ամուսնություն և ընտանիքի կազմավորում»: 21-րդ դարում դժվար գտնվի ևս մի ազգ, որի սփյուռքն այդքան հզորացած լինի՝ արտագաղթի պատճառով և որն այդքան կարեւոր խնդիր ունենա, ինչպիսին դեմոգրաֆիան է: Եվրոպական երկրների մշակույթում վաղուց իր տեղն է գտել ընտանիքի և ամուսնության ծառայությունը, ուր մարդիկ քաղաքակիրթ կարգով կառուցում են հասարակության մեջ իրենց բաժին ընկած տեղի՝ ընտանիքի, և դերի՝ ամուսնու կամ ծնողի պարտականությունը: Արևելյան երկրներից մի քանիսում ամուսնալուծվածին (սեռը չեն կարևորում) տալիս են 3 տարի ժամկետ՝ իր կեսին գտնելու համար, այլապես նրան կզրկեն սոցիալական բոլոր արտոնություններից...

Երկար էի մտմտում այս կարեւոր թեման բարձրաձայնելու մասին, և ահա, առիթն ընձեռվեց: Ճանապարհս անցնում է Սուրբ Սարգիս եկեղեցու և ոստիկանության տարածքային բաժնի կողքով և հանդիպում եմ «Հանդիպում» գործակալությանը, ուր պատերն անգամ ժպտուն էին և ջերմությամբ լի: Մասնագիտությամբ լեզվի և գրականության ուսուցչուհի Նարինե Մարտոյանը 7 տարի առաջ համարձակություն ունեցավ առաջինը Հայաստանում բացել «Հանդիպում» ամուսնության և ընտանիքի կազմավորման գործակալությունը: Հիրավի, համարձակ քայլ էր... Այսօր, երբ հետադարձ հայացք է ձգում, տեսնում է, որ իրենց կողմից կազմված ընտանիքների թիվն ավելին է, քան իր ճանաչած ամուրիներինը... Իմ ներկայության պահին սպիտակահեր մայրը եկել էր՝ որոշելով ինչ գնով ուզում է լինի՝ այս տարի 40-ամյա տղային պսակի Նարինեի առաջարկած հարսնացուի հետ. «Թոռնիկ եմ ուզում, այ բալա, մուրազով սպասել եմ, որ օտար հողից գա, իր հողում զավակ ունենա»... Իսկ Նարինեն համբերատար պատմում էր հերթական ոսկեձեռիկ հարսնացուի մասին: Այցելուն գոհ հեռացավ՝ ձեռքին ամուր սեղմած՝ 56-71-21՝ կենտրոնի հեռախոսահամարը: Կարևորելով մարդու՝ մանկավարժ-հոգեբանի, կնոջ և մոր անկողմնակալ դիրքորոշումը, իբրև կենտրոնի հաջողության գրավական, նշեմ, որ բոլոր ժամանակներում անհատն է իր շուրջը ձևավորել հասարակության համար կարևոր կառույցի ստեղծումն ու զարգացումը: «Հանդիպումը» պարտքի մեծագույն զգացումով է կատարում հայ հասարակության բջջի՝ ընտանիքի ստեղծման բարդ ու պատասխանատու գործը: Վկայությունը՝ տոնական միջոցառումներին կազմակերպվող հանդիպում-ծանոթությունների երեկոներն», ուր, որպես կանոն, մասնակցում են 17-75 տարեկան «երիտասարդներ», և կազմավորվում են մի քանի զույգեր:

Այս բոլորը Նարինեն կատարում է մեծագույն սիրով ու նվիրումով: Ի թիվս պաշտոնյա տղամարդկանց, որոնց թիվը ծանրակշիռ է, բազմաթիվ են հավատ ներշնչող այցելուները, ովքեր վստահում են գործակալությանը՝ օրըստօրե բազմապատկելով թիվը: Ցավոք, բացի վստահությունից, երևույթը հուշում է, որ չամուսնացած կամ ամուսնալուծված մարդկանց թիվն աննախադեպ չափերով ավելանում է: Նայենք մեր շրջապատի ընտանիքներում ապրող չամուսնացածներին: Նրանք շատ են, ես կասեի՝ չափազանց շատ: Որպես կանոն՝ մի մասը կյանքից հիասթափված, պարփակված աշխատանք կոչվող իր վանդակում: Մյուսները ժամանակ չունեն կամ նրանց այլևս չի ժպտում ապագան... Ինչու... Քանի որ մի բուռ ուծացման եզրին կանգնած ազգը, արտագաղթ, երկրաշարժ և Ղարաբաղ տեսած հայերս բարոյական իրավունք չունենք «չնկատելու» խոցի պես բաց այս վերքը: Գուցե հարկավոր է պետական հնչեղություն հաղորդել աչք ծակող այս խնդրին, քանի դեռ դեմոգրաֆիական պատկերը սպառնալի չափերի չի հասել: Ասեմ, որ հասկանալի պատճառներով մեջբերում չեմ կատարում ամենավերջին ՀՀ-ում ամերիկյան վիճակագրական ինստիտուտի կողմից կատարված և հրատարակված հետազոտությունից: Հուսանք, որ բոլոր զարգացած երկրներում առկա «Ընտանիքի դպրոց» անունով կառույց-մոդելը Հայաստանում ևս իր արժանի տեղը կգտնի՝ շնորհիվ ողջախոհ պետական մոտեցման:

Նաիրա ԽԱՌԱՏՅԱՆ

«Քանզի հայ է»

Խաղերից մեկում իր մասին գրում է Սայաթ-Նովան

Երբեմն-երբեմն վրացական եւ ադրբեջանական մամուլում «գիտական» հոդվածներ են հայտնվում, որոնցում կասկածի տակ է դրվում ուշ միջնադարի հանճարեղ բանաստեղծ Սայաթ-Նովայի ազգային պատկանելության հարցը:

Սայաթ-Նովան ստեղծագործել է Կովկասի երեք մեծ ժողովուրդների լեզուներով՝ հայերեն, վրացերեն եւ թուրքերեն (ոչ ադրբեջաներեն, որոնք այդ թվերին չէին էլ կասկածում, որ հետագայում իրենք այդպես էին կոչվելու): Բարեբախտաբար, պահպանվել է Սայաթ-Նովայի խաղերի ինքնագիրը՝ «Դավթարը», որում առկա է մոտ 117 թուրքերեն խաղ, որոնց մի մասը հայատառ է, մյուսը՝ վրացատառ եւ 47-ը՝ հայերեն խաղ, բոլորն էլ վրացատառ (բացի մեկից, որի տառերի մի մասը հայերեն է, մյուսը՝ վրացերեն):

Վրացերեն խաղեր «Դավթարում» չկան: Դրանք աղճատված վիճակով մեզ են հասել Սայաթ-Նովայի որդու՝ Օհանի՝ Սանկտ-Պետերբուրգում վրաց արքայազն Թեյմուրազի պատվերով գրած մի ժողովածուից: Հաճախ մերոնք Սայաթ-Նովայի ազգությունը հաստատելու համար փաստեր են բերում այն մասին, որ նրա անունը Հարություն (Արութին) է եղել, որ նա բազում հայերեն բանաստեղծություններ ունի գրած, որ նրա հոր անունը Կարապետ է եղել, մոր անունը՝ Սառա, որ նրա կին Մարմարը թաղված է Թիֆլիսի ս. Գեւորգ վանքի արեւելյան դռան մոտ, որ նա որպես քահանա եւ այնուհետեւ վարդապետ պաշտոնավարել է Վրաստանի, Հայաստանի եւ Պարսկաստանի հայկական վանքերում: Սրանք բոլորն էլ հզոր, բայցեւայնպես կողմնակի փաստարկներ են:

Որեւէ մեկի ազգային պատկանելության մասին չի կարող լինել ավելի հզոր կռվան, քան հենց իր կողմից արված վկայությունը: Սիրով ընթերցողի դատին եմ հանձնում Սայաթ-Նովայի ինքնագիր «Դավթարի» 62-րդ էջում գտնվող վրացատառ թուրքերեն խաղի բնագրի լուսատիպը եւ դրա՝ իմ կատարած գեղարվեստական թարգմանությունը, որը տպագրվում է առաջին անգամ: Այդ խաղում Սայաթ-Նովան ինքը միարժեքորեն հաստատում է իր ազգանունը: Խաղի գեղարվեստական թարգմանության համար որոշակի թարգմանչական ուղղումներից հետո հիմք եմ ընդունել հանգուցյալ արեւելագետ Նիկոլայ Գեւորգյանի կատարած տողային թարգմանությունը:

Իշխան ՍՏԵՓԱՆՅԱՆ



***

Իմաստունաց ընտիր խոսքին
մարգարեայ մատն է դիպել.
ասես լինեն ճախարակից
քաղած ոսկե, արծաթ թել:

Առանց Հավատ այս աշխարհում
արյուն արցունք կվաստակես.
ջաղաց կըլնեն մարմնիդ համար
ատամներդ քո բերանում:

Մեն-միայնակ ողբ եմ ասում,
հալալ-զուլալ ընկեր փնտրում,
լավ ընկերը մարդու կյանքում
վշտին աղոթք՝ սպեղանի է:

Գող-ավազակ, գռփող մարդը
բազում պատրաստ միջնորդ ունի.
արդար կյանքով ապրած մարդը
երկնքի վարք-խոստումն ունի:

Ծագող լույսին ով խեթ նայե.
աչքն արյուն-արցունք վայե,
Սայաթ-Նովեն Քրիստոսին
չի ուրանա՝ քանզի Հայ է:

➲25

Թբիլիսին պարզապես կախարդում է. Բոլոր վրացական եկեղեցիները լուսավորված են, բոլորը՝ անխտիր:

Սամեբայի ճանապարհին մի քանի խավար, մութ վայրերի էլ հանդիպեցինք, և երբ նկատեցինք եկեղեցու գմբեթ, մոտեցանք. եկեղեցին տարօրինակորեն լուսավորված չէր: Երբ արդեն եկեղեցու բակում էինք, հասկացանք, որ կանգնած ենք Վրաստանում իրավական որևէ կարգավիճակ չունեցող հայկական եկեղեցու առջև, որի ճաքած պատերի տակ տեղադրված էր հայկական խաչքար՝ մակագրությամբ. «Հայ ժողովրդից՝ Թբիլիսիին: Թբիլիսիում, սակայն, լուսավորված վրացական եկեղեցիների կողքին կանգնած են չլուսավորված հայկականները, որոնցից մեկի բակում յոթ-ութ տղա ֆուտբոլ էին խաղում:

Սամեբայի բակում ենք. Հրաշք տեսարան՝ երիտասարդներ, տարեցներ, երեխաներ, բոլորը եկեղեցու բակում են. Վրաց եկեղեցու լույսը միայն ֆիզիկական չէ: Գլխաշորերով օրիորդներն ու երիտասարդները գիշերվա ժամը քսաներեքին մոտ եկեղեցում են: Մեր բարձր հայերենը լսելով՝ մի տարեց մարդ հանկարծ դիմեց մեզ, երբ պատրաստվում էինք մտնել Սամեբա. «Ո՞ւր եք գնում, ի՞նչ եք անում, այ երեխեք»: Շփոթվեցինք անգամ, երբ հարցական հայացքներով նայեցինք ծերունուն, ասաց. «Էս եկեղեցին կառուցվել է հին Հավլաբարի հայկական գերեզմանոցի վրա. Դա քրիստոնեությո՞ւն է»: Չտեսանք Սամեբան՝ ներսից, իսկ եկեղեցու բարձունքից մինչև ներքև իջանք լուռ, միայն խավարամած հայկական եկեղեցիների դիմաց՝ կրկին լուռ կանգ էինք առնում... Տղաները շարունակում էին ֆուտբոլ խաղալ, խանութպան հայուհիները ձեռքով հրաժեշտ տվեցին մեզ՝ «Նորեն համեցեք» ասելով: Կարծես մեզանից ոչ ոք պատրաստ չէր ասելու՝ անպայման:

ՎՐԱՑՈՒ ՔԵՖՆ ՈՒ ՀԱՅԻ ՋԲՈՍԱՆՔԸ

Կովկասում ժամանակին այսպիսի արտահայտություն կար՝ «Բաքվում աշխատիր, Թբիլիսիում քեֆ արա, Երևանում զբոսնիր»: Սովետական «եղբայրական» ժամանակներից մի քանի տասնամյակ անց այս արտահայտությունը շատ քիչ է կորցրել



իր արդիականությունը: Հիմնվելով ադրբեջանցի լրագրողների խոսքերի վրա, Բաքվում այժմ էլ կարելի է «լավ փող աշխատել», Ադրբեջանի մայրաքաղաքը հիմա էլ խոշոր արդյունաբերական կենտրոն է, առաջին հերթին, անշուշտ, նավթաարդյունաբերական, Թբիլիսիի պանդոկներում ու նորահայտ «Փաբ»-երում էլի կարելի է ուզածիդ պես քեֆ անել (եթե, իհարկե, ունես կլորիկ գումար), իսկ Երևանում կարող ես անցկացնել ամենալավ էքսկուրսիաները՝ կովկասյան մայրաքաղաքներից, սա, ի դեպ, նաև վրացի ու ադրբեջանցի լրագրողների խոսքերով:

Ռուսթավելի-Աբովյան

Թբիլիսիի կենտրոնական՝ Ռուսթավելու պողոտայում, առաջինն, ինչ աչքի է ընկնում, բացի, իհարկե, պետական հիմնարկներից, մուրացկաններն են՝ յուրահատուկ սև զգեստներով, գրեթե հինգ մետրը մեկ, կանգնած են նրանք, և, տարօրինակորեն, խոսում են հայերեն, ադրբեջաներեն, ռուսերեն, անգամ երբեմն անգլերեն: Երևանի Աբովյան փողոցում նույնպես կարելի է տեսնել մուրացկանների, սակայն ոչ այդքան շատ... և եթե մուրացկանների քանակով կարելի է որոշել քաղաքի սոցիալական ճիշտ մակարդակը, ապա Երևանը շատ ավելի բարեկեցիկ քաղաք է:

Երեկոյան ժամերին Ռուսթավելիում ավելի քիչ մարդ կարող ես տեսնել, քան մեր Աբովյանում: Սա, սակայն, չի նշանակում, որ Վրաստանի մայրաքաղաքը սակավամարդ է, պարզապես շատերը պանդոկ-ռեստորաններում են: Իսկ մանավանդ տաք եղանակին Աբովյան փողոցի անցուդարձի մասին խոսելը, կարծում ենք, ավելորդ է. ինչպես արդեն նշեցինք՝ Թբիլիսիում քեֆ արա, Երևանում զբոսնիր: Հետաքրքրական է, որ այս վերջինն այն պարագայում, որ թիֆլիսյան կենտրոնական ռեստորաններում կամ թեթև պանդոկներում ավելի թանկ են «բոլոր տեսակի հաճույքները», քան Երևանում, սակայն, ինչպես ասում են՝ ավանդույթի դեմ այլ գործոններն անզոր են:

Մի ավանդույթ, սակայն, բազմազգ Թբիլիսիում խախտվել է. անգամ Ռուսթավելիում անզեն աչքով չես գտնի որևէ խանութ, որևէ ռեստորան՝ վրացերենից բացի այլ մակագրությամբ. ամենուր վրացական դրոշներ (ինչը, խոստովանենք՝ ընդօրինակելի է, և աչք շոյող - *Հ. Ա.*), վրացերեն մակագրություններով ռեստորաններ: Մտնենք դրանցից մեկը: Նախ նշենք, որ Թբիլիսում ոչ ոք ուշադրություն չի դարձնում ռեստորանի արտաքին ու ներքին շքեղ դիզայնին: Այնտեղ

➲27

26➲

չես տեսնի երևանյան գերժամանակակից սրահներով, պատերով ռեստորաններ. Թբիլիսում սիրում են իրենց՝ վրացական պատմությունը և կարողանում են պահպանել այն, նույնիսկ երբեմն չափազանցելով: Օրինակ՝ երևանյան ռեստորանի շքեղ ջահերի փոխարեն՝ Թբիլիսում կարելի է տեսնել ճրագաջահեր՝ առաստաղից կախ, պատերին, ասենք՝ եղջերուի գլուխ, գորգեր... Սպասարկման առումով մեր մայրաքաղաքը, կարծում ենք, առաջատարն է. օրինակ՝ 10 խինկալին Երևանում կբերեն առավելագույնը 10 րոպեից, Թբիլիսում, սակայն, կարող է տևել անգամ 40 րոպե: Իսկ ընդհանուր առմամբ՝ թիֆլիսյան ռեստորանը շատ ավելի հետաքրքրական է երևանյանից. աղմուկ, անգամ ամենաթանկ ռեստորաններում՝ հասարակական, նույնիսկ, ընտանեկան մթնոլորտ, որտեղ սեղան-սեղան երգում են, որտեղ մի սեղանի տղամարդը կարող է պարի հրավիրել մեկ այլ սեղանի կնոջը, որտեղ կարող ես միանալ հարևան սեղանի տղամարդկանց ու պարզապես խմել նրանց հետ՝ վերջիններիս հաշվին: Երևանում նման բան ուղղակի անհնար է:

«Բիճո-ախպեր»



Սրանք գրեթե համարժեք «երևույթներ» են, սակայն նրանց առօրյան՝ ոչ այնքան: Եթե «բիճոն» սովորաբար եվրոպական սանրվածքով, ազատ հագուստով, գրեթե միշտ՝ աղջկա ուղեկցությամբ երիտասարդ է, ապա «ախպերը»՝ կարճ սանրվածքով, հիմնականում սև հագուստով ու հաստ ոսկյա շղթայով ու հիմնականում իր նման ախպերների ուղեկցությամբ երիտասարդն է: Միակ բանը, որը միավորում է այս երկուսին, որպես կանոն, մեքենայի առկայությունն է, մեքենայում բարձր միացված երաժշտությունը, և, անշուշտ, կովկասյան տաքարյունությունը: Բացի սրանից՝ բիճոն ռեստորան-պանդոկում լիարժեք կարող է քեֆ անել ոչ միայն «ուտել-խմելով», այլև երգելով՝ անգամ ազգային երգեր, ախպոր համար, սակայն, ռեստորան գնալը «հաց ուտելու» խորհուրդ ունի, ոչ միայն չեն երգում ազգային երգեր, այլև... շատերը անգամ չգիտեն:

Իսկ օրիորդների վերաբերյալ՝ կրկին տարբերություններն ավելի շատ են, քան նմանությունները. ամենակարևորը, ինչն աչքի է զարնում՝ վրացուհիները... ժպտում են, ընդ որում՝ հաճախ առիթը պարտադիր չէ, նրանք կարող են ժպտալ անծանոթին անգամ: Նրանք բոլորովին ուշադրություն չեն դարձնում առօրյա զգեստին, ավելի մարդամոտ են, ավելի շատ և հաճախ են ծխում:

Ռուսթավելին արդեն ավարտվում էր. փողոցի մի անկյունում 7-8 հոգի՝ աղջիկ-տղա, գարեջուր էին խմում, ծխում, աղմկում... Երևանում այսպիսի «բացահայտ բաներ» չես տեսնի՝ այն էլ կենտրոնական փողոցներում...

Հովիկ ԱՖՅԱՆ, Թբիլիսի

ԱԶԱՏ ԽՈՍՔԻ ՄՈՒՆԵՏԻԿԸ

Լրացավ Սերգեյ Դովլաթովի մտերիմ բարեկամ, ազատ խոսքի իսկական մունետիկ Իոսիֆ Բրոդսկու ծննդյան 70-ամյակը: Հայ ընթերցողները գիտեն Բրոդսկուն որպես Նոբելյան մրցանակի դափնեկիր կամ վտարանդի այլախոհ բանաստեղծ: Քչերն են ծանոթ նրա կենսագրությանը կամ պոեզիային: Հայ գրասերի հանդիպումը միաժամանակ դասական եւ նորարար բանաստեղծի հետ՝ կայացավ բավական ուշացումով, քանզի Բրոդսկուն դժվար է թարգմանելը, եւ նա այնքան էլ դյուրընթեռնելի չէ նույնիսկ բնագրով:

Իր ճակատագրի մասին խորհելիս նա կանխատեսել էր, որ այս աշխարհից կհեռանա 60-ը չբոլորած: Եվ չսխալվեց: Նա կյանքից հեռացավ 1996 թ. եւ թաղված է Վենետիկում: Ծնվել է 1940 թ. մայիսի 27-ին, Լենինգրադում: Բրոդսկին Նոբելյան մրցանակակիր դարձավ 1978 թ., երբ նույն տարում Մոսկվայում լույս տեսած «Գրական հանրագիտարանային բառարանում» նրա անունը ընդհանրապես հիշատակված չէր: 60-ական թվականներին նրան առաջին անգամ ձերբակալեցին եւ դատարանի վճռով ուղարկեցին հոգեբուժարան: 1964 թ. Բրոդսկուն հայտարարեցին պորտաբույծ եւ աքսորեցին Արխանգելսկի մարզ: Բանաստեղծին հրապարակային պաշտպանության տակ առան Աննա Ախմատովան, Կորնեյ Չուկովսկին, Սամուիլ Մարշակը եւ ուրիշներ:

Լկտի հաշվեհարդարի ծնած տառապանքից պոետի հոգում նոր բանաստեղծություններ էին ծնվում եւ, ի հեճուկս հակառակորդների, օրեցօր բազմապատկվում էր նրա փառքը: Աքսորից հետո անգամ Բրոդսկուն չէին տպագրում, եւ նա ստիպված զբաղվում էր թարգմանությամբ, որպեսզի գոյատեւի: Շատ էր ուզում գալ Հայաստան, զբաղվել հայ բանաստեղծության ուսումնասիրությամբ: Համոզված ենք, որ Բրոդսկու հանդիպումը Հայաստանի հետ կլիներ նույնքան նշանակալից, որքան Օսիպ Մանդելշտամի հանդիպումը: Ցավոք, նրան չընդունեցին ոչ Հայաստանում, ոչ էլ այլ տեղերում, եւ վշտացած բանաստեղծը 1972 թ. հեռացավ ԽՍՀՄ-ից: Սակայն արտասահմանում նույնպես հեշտ չէր վտարանդի Բրոդսկու համար, եւ նա ԱՄՆ-ում գրել է. «Միայն մոխիրը գիտի՝ ինչպես են վառվում մինչեւ վերջ: Այստեղ ես շփվում եմ մարդկանց հետ, որոնց հետ տանը կիրաժարվեի խոսել անգամ»:

Օտար եզերքը հայրենի հողին
Հարազատ է ճիշտ այնչափով,
Որքան տարածությունը
Հարաբերվում է փակուղիներին:

Օտարումը հարազատ երկրից Բրոդսկու համար միակ հնարավոր տարբերակն էր: Նա այլեւս չէր կարող հանդուրժել կորուստները, հիասթափություններն ու նվաստացումները: Հետագայում, երբ երկրում իրավիճակը փոխվեց եւ հնարավորություն ստեղծվեց վերադառնալու,



նա չցանկացավ կրկին ապրել հայրենիքում, քանզի «եթե մարդը կարող է վերադառնալ իր հանցանքի վայրը, ապա այնտեղ, որտեղ նրան նվաստացրել են, վերադառնալ չի կարող»:

Բրոդսկու մեծությունը լավ է բնութագրել Ս. Դովլաթովը իր հիշողություններում. «Հետ մղելով Հեմինգուեյին՝ նա մեկընդմիշտ դարձավ իմ գրական կուռքը: Իմ ծանոթների շրջանում գերակշռում էին արտասովոր անհատականությունները, հիմնականում՝ խիզախ սկսնակ գրողներ, ըմբոստ նկարիչներ եւ հեղափոխական երաժիշտներ: Եվ անգամ խռովարարների այդ ֆոնին Բրոդսկին ակնհայտորեն առանձնանում էր: Բրոդսկու կողքին երիտասարդ մյուս ոչ կոմֆորմիստները թվում էին այլ մասնագիտության տեր մարդիկ: Բրոդսկին ստեղծել էր վարքագծի, ապրելակերպի չլսված մոդել: Նա ապրում էր ոչ թե պրոլետարական պետության մեջ, այլ՝ իր հոգու մենաստանում: Նա չէր պայքարում ռեժիմի դեմ, նա պարզապես չէր նկատում ռեժիմը: Դրա գոյության մասին գիտեր հպանցիկ: Նրա անտեղյակությունը խորհրդային կյանքին՝ թվում էր ձեւական: Այսպես՝ նա համոզված էր, որ Ձերժինսկին դեռ ողջ է, եւ որ «Կոմինտերնը» երաժշտական համույթի անուն է: Նա չէր ճանաչում ՍՄԿԿ քաղբյուրոյի անդամներին: Երբ նրանց շենքի ճակատին փակցրել էին Մժավանաձեի վեց մետրանոց լուսանկարը, Բրոդսկին հարցրել էր. «Սա ո՞վ է: Շատ նման է Ուիլյամ Բլեյքին»: Իր վարքագծով Բրոդսկին խախտում էր չափազանց կարեւոր ինչ-որ նորմեր, եւ նրան աքսորեցին Արխանգելսկ»:

Երբ 20 տարի առաջ կյանքից անսպասելի հեռացավ Դովլաթովը, Բրոդսկին իր բարեկամի մահից հետո՝ գրեց էսսե. «Կյանքը այլանդակ է, մարդիկ՝ տխուր» վերնագրով, ուր ամբողջացրել է Դովլաթովի կերպարը՝ որպես ազատ խոսքի մունետիկ:

Մելսինե ՀԱԿՈԲՅԱՆ


Начитанный - это не оскорбление!

С грустью сообщаю: с некоторых пор ваш автор примирился с понятием «армянский олигарх». Увы, других у нас нет и в обозримом будущем не будет - уж какие есть. Что было, то было. В общем, по-другому и быть не могло. Что есть, то есть. Как говорят строгие мамы: не нравится - не ешь. В смысле, живи в другом месте. Однако…

